

ՆԱՀԱՊԵՏԸ


Ղազարոս Աղայեանի ծննդեան 160-ամեակի առթիւ

Էդւարդ Աւագեան

Ղազարոս Աղայեանը «Իմ կեանքից» յուշագրութեան մէջ իր գրական գործունէութեան առաջին քայլերի մասին գրում է. «Խաւար էր այդ ժամանակ մեր աշխարհը, շատ էր խաւար: Լուսատւոյ մարդուն պէտք էր լապտերով փնտրել»:

Այդպիսի մի ժամանակ գրական ասպարէզ իջաւ Ղ. Աղայեանը, վէպեր գրեց, բանաստեղծութիւններ, եղաւ ուսուցիչ, կազմեց դասագրքեր:

Ղ. Աղայեանը ծնել է 1840 թ. Վրաստանի հայաբնակ Բուխու-Խաչէն գիւղում: Հայրը խստաբարոյ մարդ էր, մայրը՝ գիր-գրականութիւն սիրող կին: Ղազարոսը հինգ տարեկանում արդէն գրաճանաչ էր, յետոյ սովորեց Շամշուղա գիւղի քահանայ Տէր Պետրոսի մօտ: Զգայուն պատանի էր, ռոմանտիկ: Շամշուղա-յում հանդիպում է եօթ տարեկան մի աղջկայ՝ Մայիկոյին եւ սիրահար-տում: «Իմ կեանքից» յուշագրութեան մէջ նա նկարագրում է իր «սիրոյ պատմութիւնը»: Սկսում է վատ սովորել: Տէր-Պետրոսը դժգոհում է խստաբարոյ հօրը: Պատանին տնից փախչում է, եւ մայրը ստիպւած նրան Թիֆլիս է տանում, քրոջ մօտ: Սկսում է կեանքի մի նոր շրջան: Նա ընդունում է Ներսիսեան դպրոց: Մոռանում է Մայիկային: «Այդ սիրոյ տեղ իմ մէջ զարթնեց մի նոր սէր առ ուսումն եւ սա էլ նոյնքան աղէտալի դարձաւ ինձ համար, ինչքան առաջինը»:




Ղազարոսը հինգ տարեկանում արդէն գրաճանաչ էր, յետոյ սովորեց Շամշուղա գիւղի քահանայ Տէր Պետրոսի մօտ: Զգայուն պատանի էր, ռոմանտիկ: Շամշուղա-յում հանդիպում է եօթ տարեկան մի աղջկայ՝ Մայիկոյին եւ սիրահար-տում: «Իմ կեանքից» յուշագրութեան մէջ նա նկարագրում է իր «սիրոյ պատմութիւնը»: Սկսում է վատ սովորել: Տէր-Պետրոսը դժգոհում է խստաբարոյ հօրը: Պատանին տնից փախչում է, եւ մայրը ստիպւած նրան Թիֆլիս է տանում, քրոջ մօտ: Սկսում է կեանքի մի նոր շրջան: Նա ընդունում է Ներսիսեան դպրոց: Մոռանում է Մայիկային: «Այդ սիրոյ տեղ իմ մէջ զարթնեց մի նոր սէր առ ուսումն եւ սա էլ նոյնքան աղէտալի դարձաւ ինձ համար, ինչքան առաջինը»:

Տնից ոչ մի օգնութիւն չստանալով, նա հնարաւորութիւն չի ունենում շարունակել ուսումը: Տասնինը տարեկանում Համբարձում Էֆրեմեանցի տպարանում գրաշարի աշակերտ է դառնում, երեք տարի անց՝ արդէն հմուտ գրաշարի համարում է ձեռք բերում: Էֆրեմեանցի տպարանում էին տպագրում «Կռունկ Հայոց աշխարհի», «Մեղու Հայաստանի» թերթերը: Մտերմանում է Պ. Պռոշեանի հետ, որ այդ թերթերի սրբագրիչն էր: Այդ տարիներին նա կարդում էր ոչ միայն Թիֆլիսում հրատարակուող պարբերականները, այլև Մոսկուայից ստացուող «Հիւսիսափայլը»: Նաեւ

գրական փորձեր էր անում: 1862 թ. «Մեղու Հայաստանի» թերթում լոյս է տեսնում Ղ. Աղայեանի առաջին թրթուղանքը՝ «Հարկատր է օգնել չքաւորներին»: Այս բանաստեղծութիւնը դեմոկրատ գրողի հաւատամքն էր, պայքարը՝ խաւարամտութեան, յետամնացութեան դէմ:

Թիֆլիսի կեանքը նեղ էր թում նրան, որոշում է ընկերոջ՝ Միքայելի հետ Մոսկուա գնալ: Մոսկուայում նրան յաջողեց համալսարան ընդունել, բայց հինգ տարի աշխատելով նախ՝ Մոսկուայի տպարաններում, ապա՝ Պետերբուրգում, զբաղում է ինքնակրթութեամբ: 1866 թ. Պետերբուրգում գրում է «Արութիւն եւ Մանկէլ» ինքնակենսագրական վէպը:

1867 թ. Ղ. Աղայեանը վերադառնում է Թիֆլիս եւ աշխատանքի անցնում Հ. Էմֆիրաճեանցի տպարանում: Նրան հրաւիրում են Էջմիածին՝ բարեկարգելու



Մայր աթոռի տպարանը: Մի տարի անց նշանակւում է միաբանութեան «Արարատ» ամսագրի խմբագիր: 1870 թ. Ղ. Աղայեանը իրեն նւիրում է մանկավարժութեանը. ուսուցչութիւն է անում նախ՝ Ախալցխայում, Ալեքսանդրապոլում, յետոյ՝ Երեւանի, Շուշի դպրոցներում: Յնունելով Ուշինսկու մանկավարժական գաղափարների վրայ, Ղ. Աղայեանը զարգացնում է իր ուրոյն մանկավարժական հայեացքները, ուր գլխատողը մայրենի լեզուի ուսուցումն էր՝ կապւած երեխաների աշխատանքային դաստիարակութեանը: «Մտքի զարգացման համար Ֆիզիքական պարապմունքը անհրաժեշտ

Է՞ն՝ Կ՞ն՝ Ն՞ն՝ ՍԾ՞ն՝ Ս՞ն՝ Օ՞ն՝

Արամ Ա. Վեհափառ Հայրապետի Այցելութիւնը Իրան.- Մեծի



Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը ընկերակցութեամբ Գերաշնորհ Տէր Խաժակ Եպիս. Յակոբեանի եւ հոգեշնորհ Մաշտոց Վարդապետ Չոպանեանի, Թեհրան ժամանեց չորեքշաբթ. յուլիսի 12-ին: «Մեհրաբադ» օդանաւակայանում տեղի ունեցաւ պաշտօնական դիմաւորում, պետական պաշտօնարար անձերի, Հայաստանի ու Լիբանանի դեսպանների, թեմակալ առաջնորդների, իսլամական խորհրդարանի զոյգ հայ պատգամաւորների եւ ազգային իշխանութիւնների ներկայացուցիչների միջոցով: Այնուհետեւ Վեհափառի շքախումբը առաջնորդեց դէպի Ս.Սարգիս



եկեղեցի, ուր համախմբուած ժողովուրդը ծափողօղջնների տարափի ներքոյ դիմաւորեց Վեհափառ Հօրը: Եկեղեցու զանգերը դողանջեցին քաղցրալուր, սպա եկեղեցու երգչախումբը հոգեթով երգեցողութեամբ հնչեցրեց՝ Հրաշափառ Աստուած եւ միշտ բարեխնամող... շարականը: Վեհափառը կատարեց կանօնական աղօթք: Թ.Հ.Թ Բարեխնամ Առաջնորդ՝ Գեր. Տ. Սեպուհ Եպիս. Սարգսեանը իր բարիգալստեան խօս-

քից յետոյ հրաւիրեց Վեհափառ Հայրապետին տալու իր հայրական պատգամը:

Վեհափառ Հայրապետի վեհա-կան խօսքը ընդգրկում էր տարբեր իմաստալից եւ ոգետրիչ հատուածներ. յիշենք մի պատասիկ նրանից. «Գոհութիւն ու փառք կուտան Աստուծոյ, որ ահաւասիկ ինձի անգամ մը ես, եւ երրորդ անգամ ըլլալով որպէս կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, այս գեղեցիկ պատեհութիւնը, սքանչելի առիթը ընծայեց, որպէսզի ըլլամ ձեզի հետ, մեր ժողովրդի բոլոր զաւակներուն հետ, այս սրփազան կամարներուն ներքեւ եւ Իրանի Իսլամական հանրապետութեան այս օրհնեալ հողին վրայ, որպէսզի լսեմ ձեզ մօտէն, տեղեակ ըլլամ մեր ժողովրդի զաւակներուն եւ մեր թեմի, մեր համայնքի ներքին կեանքին մտահոգութիւններուն, մարտահրաւիրներուն, աշխատանքներուն եւ ընդհանրապէս մեր կեանքի յառաջխաղացքին»:

Վեհափառ Հայրապետը իր խօսքերի մէջ յատուկ ուրախութեամբ ողջունեց երկրի հոգեւոր գերագոյն



Առաջնորդին եւ հանրապետութեան նախագահին: Ապա ներկայ գտնեց բիրաւոր նահատակների շիրիմին, ծաղկեպսակ ընծայեց եւ հոգոց ասաց:

Նախ հոգոց ասաց հանգուցեալ Արտակ Սրբազանի շիրիմի վրայ: Վեհափառ Հայրապետն իր շքախումբով բարձրացաւ Առաջնորդա-

րանի դահլիճը եւ ընդունեց ներկաների աջ համբոյրները:

Ժողովուրդը հերթականութեամբ մօտեցաւ Վեհափառին, բարի գալուստ մաղթեց եւ համբուրեց Հայրապետի աջը: Իւրաքանչիւրն մաղթան-



քի եւ արեւշատութեան աղօթք էր մրմնջում, որպէսզի Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսի նախանձախնդիր տնօրինութեամբ, էլ աւելի պայծառակերպի Հայոց Եկեղեցին եւ զօրանայ ու հզօրանայ յաւերժական հայոց աշխարհը:

Վեհափառ Հայրապետը իր երեք շաբաթեայ այցելութեան ընթացքում կատարելու է հովապետական այցելութիւն երեք թեմերին, Հայաստանում Քրիստոնէութեան պետական կրօն հռչակման 1700-ամեակի ձեռնարկների նախագահութիւն, համագումարների մասնակցութիւն ու ուխտագնացութիւն:

Ռ. Կորիւն

Սրբազան Հայրը Վեհափառ Հայրապետի թանկագին նւերները յանձնեց ուսուցիչ-ուսիներին.- Թեհրանի Հայոց Թեմի Կրթական Խորհրդի հրաւերով երեքշաբթի 11 յուլիսի առաւօտեան, Թեհրանի հայ ուսուցիչները հանդիպում ունեցան ԹՀԹ Առաջնորդ Տէր Սեպուհ Սարգսեանի հետ Ազգային Առաջնորդարանում: Գերաշնորհ Սրբազանը մէկական «Ընտանիքի Աստուծաշունչ» յանձնեց ուսուցիչ-ուսիներին: Գրքերը նւիրուած էին Արամ Ա. Կաթողիկոսի կողմից իրանահայ Թեմերին: Սրբազանը ներկայներին բարի գալուստ մաղթելուց յետոյ անդրադարձաւ համայնքային մի շարք խնդիրների, որի ընթացքում քննադատեց «Արաքս» ամսագրում տպւած «կարգալոյծ» Մուշեղ քահանայ Աւետեանին վերաբերող յօդաւորը:

ՌաՅՖի համալիրի սկստուական ընդհանուր բանակում. - Յուլիսի 8-ին ՌաՅՖի Մարզանշակութային Համալիրի սկստուական բաժինը իր ընդհանուր բանակումը ունեցավ «Ռոբատ» գործարանի տարածաշրջանում: Բանակումի ընդհանուր պատասխանատուն էր սկստուապետ՝ Ազատ Մկրտչեանը:

Յուշերեկոյ նւիրած Երաջ Դախվերդեանին

ԻԱՄՄ կենտրոնատեղիում հինգ-շաբթի յուլիսի 6-ին կազմակերպել էր յուշերեկոյ նւիրած վաղամեռիկ Հրաջ Հախվերդեանին: Ներկայ էին գտնել հոծ թուղ միութենականներ, ընկերներ, հարազատ-բարեկամներ եւ ծանօթներ: Նրանք եկել էին յարգելու նրա յիշատակը եւ վերաթարմացնելու իրենց անցեալի ապրած յուշերը: Նախքան միջոցառման բացումը, ներկաների համար սփռուած էր հանգուցեալի գաղափարական համոզումները արտայատող կենդանի ձայնը, ելոյթի ձայներիզը արտասանուած 1982 թ. Ապրիլեան մեծ ողբերգութեան յիշատակման հանդէսին: Ելոյթի բառերը եւ նախադասութիւնները հնչուած էին կարկաչուն աղբիւրի պէս պարզ, յստակ, անմիջական եւ ոգեւորիչ, որը ընդհանուր գծերի մէջ հայ ժողովրդի որդեգրելիք քաղաքականութեան ուղին էր մեկնաբանում, ելքեր էր առաջարկում հասնելու համար մեր արդար իրաւունքներին, ապա ցոյց էր տալիս պայքարի ճանապարհը ընդդէմ ինպերիալիզմի գործակալ Թուրքիային, թէ ինչպէս կարելի է նրան ստիպել, որ ճանաչի ցեղասպանութիւնը: Իրօք խորհրդատու մթնոլորտ էր սրահը լուս հետեւում էր նրա ելոյթին: Մահով հեռացած սիրելի անձի ձայնը կամ պատկերը տեսնելիս կամ լսելիս ինքնաբերաբար դառնում ես լռակեաց եւ ընկղմում մտքերի մէջ: Յուշերեկոյի հանդիսավար՝ դոկտ. Անդրանիկ Սիմոնեանը խոր ափսոսանքով յիշատակեց հանգուցեալի անցած կեանքի կարճ ուղին, նշելով, «Հրաջն անգուգական միութենական եւ ընկեր էր, նրա կեանքը կարճ եղաւ, բայց եղաւ բեղմնատու, նրա կորուստը ցաւալի է բոլորիս համար: Նա

օծուած էր մարդկային, ազգային եւ գիտական բարձր յատկանիշներով»: Այնուհետեւ յարգելի դոկտորը յիշելով միութեան վերջին երկու տասնամեակի ընթացքում հանգուցեալ դարձած անդամների անունները, հրաւիրեց ներկաներին յոտնկայս յարգել նրանց անմոռանալի յիշատակը:




Հանդիսավարի հրաւերով միութեան նախագահ պրն. Արմաւիր Մարգարեանը, հակիրճ բառերով անդրադարձաւ հանգուցեալի յիշատակին որպէս հաւատարիմ միութենական, անբասիր ազգային-հասարակական գործիչ եւ ազնիւ խառնածքով հայ մարդ: Ապա յաջորդաբար արտասանեցին դոկտ. Հրաջ Խաչատրեանը եւ պրն. Գուրգեն Աբնուսին, որոնք վերահանցեցին հանգուցեալի ընկերային կեանքի եւ միութեան գործունէութեան շրջանի կարեւոր դրագներ, նաեւ յիշատակելով նրա «Փիւնիկ» շաբաթաթերթի գլխատու խմբագիր լինելու ժամանակաշրջանի գրութիւնների ոգին յեղափոխութեան շրջանում: Գործադրեց յուշերեկոյին յարմարող գեղարուեստական ծրագիր, որին իրենց մասնակցութիւնն էին բերել հետեւեալ անձինք. 1. Վերժիկ Մարգսեան (Մահմուդեան), արտասանեց՝ Վ. Դարբեանի «Երբ վերջին անգամ» բանաստեղծութիւնը: 2. Գագիկ Անդրիասեան, արտասանեց՝ Եղիշէ Չարենցի «Երբ երազ տեսայ» բանաստեղծութիւնը: 3. Փիւնիկ Սիմոնեան, արտասանեց՝ Վահագն Դարբեանի «Ռեքի-էմ»-ից հատուածներ: 4. Գայեանէ Քեշիշեան (Արգարեան), արտասանեց՝ Պարոյր Սեւակի «Որդուս» բանաստեղծութիւնը: 5. Հերոս Մուլէյմանեան, կատարեց երգեր:

6. Մեղա Սուքիասեան (Ներսիսեան), արտասանեց՝ Վահան Տէրեանի «Հրաժեշտի գագէլ» բանաստեղծութիւնը: Միջոցառման աւարտին յարգելի հանդիսավարը օրայ ձեռնարկի ոգին արտայայտող բառերով եզրակացրեց թէ, «Սիրելիների մահը պիտի զգաստացնի մեզ, որպէսզի առաւել միասնական ու միական ծառայենք մեր հայրենիքին ու հայ ժողովրդին: Ներկաները գոհունակութեամբ թողեցին սրահը, իրենց յուշերի մէջ արձանագրելով անմոռանալի Հրաջի կեանքից պատառիկներ:

ԿԸՅ-ի հանդիպումը միութիւնների ներկայացուցիչների հետ. - ՊԺ-ի Կենտրոնական Ընտրական Յանձնախումբը յուլիսի 9-ին բոլոր միութիւններին հրաւիրել էր «Չարմահալ» միութիւն խորհրդակցութեան համար: Սկզբում ԿԸՅ-ի կողմից տեղեկութիւններ փոխանցեց կատարուած աշխատանքների կապակցութեամբ, այնուհետեւ եղան առաջարկներ ու մտքերի փոխանակութիւն: Ներկայ էր միայն «Ալիք» օրաթերթի թղթակիցը: Չէին հրաւիրել «Լոյս» երկշաբաթաթերթի եւ «Արաքս» ամսագրի թղթակիցները:

Լոյս տեսաւ «Աղեղնատու Արաշը» գիրքը. - Դոկտ. Անդրանիկ Սիմոնեանի թարգմանութեամբ լոյս է տեսել եւ վաճառուած է սոյն գիրքը, հայերէնպարսկերէն զուգահեռ տեկտուով: Գրքի հեղինակն է Իրանցի յայտնի բանաստեղծ Սիւաոշ Քասրային:



Է՞ն՞ Կ

ՀՀ Մշակոյթի նախարար՝ Ռոյանդ Շառռեանը Թեհրանում Ի.Ի.Հ. Մշակոյթի նախարար պրն. Մոհաջերանի հրաւերով սոյն թականի յուլիսի 17-ին Իրան ժամանեց, ՀՀ Մշակոյթի եւ Սպորտի նախարար՝ Ռոյանդ Շառռեանը: Երկու երկրների նախարարների հանդիպման ընթացքում քննարկեցին

փոխադարձ համագործակցութեան հետ կապած հարցերը: Այդ միտքի ընթացքում որոշում ընդունեց, նախ-



քին համաձայնագիրը մի որոշ փոփոխութիւնների ենթարկել: Պրն. Մոհաջերանին այդ հանդիպման ձեռքբերումները արժեքատու գր-

նահատելով յայտնեց՝ «Երկու երկրները տուրիստական, մշակութային, գրական եւ երաժշտական բնակաւարներում կարող են ցանկալի համագործակցութիւն ունենալ»:

Իրան-Գերմանիա յարաբերութիւնների նոր շրջան.-(Բահար օրաթերք 9.7.00): Գերմանիայի նախագահի գրասենեակից յաղորդել են, որ Գերմանիայի իշխանութիւնը պրն. Խաթամիի այցելութիւնը դիտում է որպէս «նոր սկիզբ դժար շրջանից յետոյ»: Նրանք ատելացրել են, որ այդ երկու երկրների համագործակցութիւնը անցողիկ բնոյթ չունի, այլ հիմք է դնելու երկու երկրների շահերին համապատասխանող նոր յարաբերութիւնների:


Թեհրանի օդի աղտոտւածութիւնը ճգնաժամային է.-(Բահար օրաթերք 5.7.00): Թեհրանի «Օդի Աղտոտւածութեան Հսկողութեան Ընկերութիւն»ը յուլիսի 5-ին յայտնել է, որ Մոնո օբսիդ ածխաթթի մնացորդային խտութիւնը Թեհրանի օդում ճգնաժամային է: Մասնագէտները դրա պատճառը երկու միլիոն ատոմերենաների երթևեկութիւնն են համարում:

Իրանը և Ադրբեջանը էլեկտրահոսանք են փոխանցելու.-(Բահար օրաթերք 5.7.00):2000 թականի օգոստոս ամսից, երկու երկրները կը սկսեն հոսանքի փոխանակութիւնը: Իրանում Ադրբեջանի դեսպանը յայտնել է, որ այդ գործի համար «Իմիշլի-Փարս արտ» հոսանքի փոխադրման գծի 220 կիլովատ ուժգնութեամբ շինարարութիւնը աւարտել է:

Սեպտեմբերին Թարիզում կը բացի Ադրբեջանի հիւպատոսութիւն.-(Ազգ օրաթերք 14.6.00): ANS գործակալութեան յաղորդումով, Թարիզում սեպտեմբեր ամսին նախատեսում է Ադրբեջանի հիւպատոսութեան հիմնում: Այս մասին պայմանաւորաբար է ձեռք բերել տնտեսական համագործակցութեան կազմակերպութեան Թեհրանեան համաժողովի նախօրերին Ի-Ի Հ և Ա Հ նախագահների միջև:

Յ Թ Է Ի Զ Կ

Պատմա-բանասիրական հանդէսի հերթական համարը.-(ՀՀ օրաթերք 16.6.00): Վերջին տարիներին հայագիտական հանդէսներից պարբերաբար հրատարակւում է միայն ՀՀ գիտութիւնների ազգային ակադեմիայի «Պատմաբանասիրական հանդէսը»:



Անանի արեւելագէտ՝ Նիկոլա Յովհաննիսեանի ծննդեան 70 ամեակը.-(ՀՀ օրաթերք 16.6.00): Այս օրաթերքում Վահան Բայրութեանի գրչով (Իրանում ՀՀ նախկին դեսպան) մի յօդած է տպագրել միջազգային ճանաչում ունեցող արեւելագէտ, դոկտոր, պրոֆեսոր Նիկոլայ Յովհաննիսեանի մասին: Նրա քարգմանութիւնը և հրատարակութիւնը արաբական երկրներում, Երուսաղիմում և ԱՄՆ-ում հայ գիտնականին բերեցին հռչակ: Ն. Յովհաննիսեանի այդ աշխատութիւնների անմիջական ազդեցութեամբ Լիբանանում, Սիրիայում և Իրաքում յայտնուեցին մի շարք ուսումնասիրութիւններ, որոնց հիմքում դրած են Ն. Յովհաննիսեանի դր-բոյքները: Ա-ճանճնակի հետաքրքրութիւն ունեն Ն.Յ.-ի աշխատութիւնները ժամանակակից արաբական



խօսութեան, Իսլամի դէրի և յարակից հարցերի շուրջ:

Լուրեր Լոռիից.-(Ժամանակ օրաթերք 16.6.00): Լոռու մարզի արդիւնաբերական ձեռնարկութիւնները անցած տարւայ համեմատութեամբ արձանագրում են համախառն արդիւնքների ծաւալների զգալի աճ: Տարեկանից գործող ձեռնարկութիւնները թողարկել են 1 մլրդ 800 մլն դրամի արտադրանք, 4.5 անգամ աւելի շատ, քան ամբողջ 1999 թականում:

Մարզի տարբեր բնակավայրերի 3877 բաժանորդական կէտերում կը վերականգնեն զագատար խողովակները, զագամատակարարումը:

ԱՄՆ-ը դէմ է Եւրոխորհրդին Հայաստանի անդամակցութեանը.-(Ժամանակ օրաթերք 21.6.00): Լաւատեղեակ ադրիները վկայում են, որ ԱՄՆ պետդեսպարտմենտը եզրակացութիւն է ուղարկել Եւրոխորհրդին՝ ՀՀ և Ադրբեջանի անդամակցութեան վերաբերեալ: ԱՄՆ-ի կարծիքով, այդ երկրները դեռևս չպէտք է ԵՄ անդամ դառնան:

ԱՄՆ-ը իր նման մօտեցումը պատճառաբանել է Ղարաբաղի չեկարգաւորւած կոնֆլիկտով, ինչպէս նաև մարդու իրաւունքների ոչ բաւարար վիճակով:

Ադամանդագործութեան գործարանի արտադրանքը 100 տոկոսով արտահանում է.-(Ազգ օրաթերք 24.6.00): Մօտ երկու տարի առաջ հիմնուած, միջազգային չափանիշներով կառուցւած բրիտանական DCA ադամանդի գործարանը այսօր դարձել է ամենախոշոր հարկատուներից մէկը Հայաստանում, և որի արտադրանքը 100 տոկոսով արտահանում է:

Հայաստան-Իրան տրանսպորտի զարգացում.-(Ազգ օրաթերք 24.6.00): Պաշտօնական մէկօրեայ այցով Հայաստան էր ժամանել Իրանի Իսլամական Հանրապետութեան ճանապարհների և հաղորդակցութեան նախարար Մուհամմադ Հոջջաթին: Այդ պատուիրակութեան կազմում էր նաև Հայաստանում Իրանի դեսպան Մ. Զոլէյնին: Բա-

նակցութեան հիմնական թեման էր օդային և ցամաքային փոխադրումները: Օդային տրանսպորտի ոլորտում երկու կողմերն էլ իրատեսական համարեցին Երեւան-Թեհրան, Երեւան-Թարիզ չեթքների վերաբացումը:

Հանցագործությունները նազել են Հայաստանում.-(ՀՀ օրաթերթ 10.6.00): Ստորև ներկայացնում ենք ՀՀ գլխավոր դատախազ Բորիս Նազարեանի հետ հարցազրույցից որոշ մասեր՝ «1999 թականին հանրապետությունում գրանցել է 10056 հանցագործություն, ինչը 705-ով կամ 6.6 տոկոսով պակաս է, քան 1998 թ.: 4.9 տոկոսով նազել են նաև ծանր հանցագործությունները, այդ թում դիտարկել սպանությունները՝ 3.2 ծանր մարմնական վնասածքները՝ 14, գողությունները՝ 2.7, առաքելությունը՝ 17.1 տոկոսով:

Ամառային արձակուրդներ երեսխանների համար.-(Ժամանակ օրաթերթ 16.6.00):Մոնոպոլիզացիայի և առևտրի ընդհանրության երեխաների համար «Հայ առևտրաբանական ընկերակցությունը» Ադրբայջանում և Դիլիջանում կազմակերպում է մեկամսեայ հանգստի ամառային ճամբարներ: Իսկ Երեւանում և մարզերում էլ կը բացվեն բակային ճամբարներ: Իրենց ամառային հանգիստը կանցկացնեն մօտ ութ հազար երեխաներ:

ՀՅԴ-ն անհիմաստ է համարում պատասխանատուները կիսել Հայաստանի կառավարության գործերում.-(Ազգ օրաթերթ 14.6.00): ՀՅԴ ԳՄ ներկայացուցիչ՝ Արմեն Ռուստամյանը պարզաբանել է, որ «Մենք նախապես որոշել էինք չառաջադրել Ռուլանդ Շառոյեանին այս կառավարությունում, նրան տեղեակ էինք պահել այդ մասին, պատճառաբանել, բայց նա իր պատճառաբանությունները բերելով, անձնական նախաձեռնությամբ մասնակցեց կառավարությանը»: Իսկ ինչով է պայմանավորված ՀՅԴ հրաժարումը նախարարական պորտֆելից: «ՀՅԴ-ն տեղ էր ստեղծած իրավիճակի գնահատականը, ինչպես նաև նշել էր իր մասնակցութեան չափը՝ վիճակը շտկելու

գործում», Նշեց ՀՅԴ ԳՄ ներկայացուցիչը: «Իհարկէ, մենք համագործակցութիւնից չենք խուսափում այն մօտեցումներում, որոնք ընդունում ենք», հաւաստեց Ա.Ռուստամյանը:

ՅԷԶ² 1/4 1² ՄԱԷՍ

Գլենդելի 40 տոկոսը հայ է, բայց որոշում ընդունողների մէջ հայերը մէկ տոկոս էլ չեն կազմում.-(Հայոց Աշխարհ օրաթերթ 24.6.00): Ամերիկեան Armenian Watch կազմակերպութիւնը մարդու իրաւունքների ոտնահարումների կապակցութեամբ հարց է հարուցել Գլենդելի քաղաքապետարանի և ոստիկանութեան դէմ:

Վերջին շրջանում յաճախակի են դարձել Լոս Անջելեսի հայութեան նկատմամբ պետական կառոյցների կողմակալ վերաբերմունքի դրսևորումները: Իրավիճակը յատկապէս սրել է Լոս Անջելեսի հայաշատ արարձաններից մէկում՝ Գլենդելում: Armenian Watch կազմակերպութեան խօսնակ Արմեն Մելիքեանի վկայութեամբ, առանց հիմնաւոր պատճառների ոստիկանութիւնը հայերին դատական գործընթացների մէջ ներքաշելու հակումներ է դրսևորում, ինչը յաճախ ստիպում է ներգաղթած ընտանիքներին ծախել ունեցած-չունեցածը, որպէսզի կարողանան պաշտպանել իրենց տարրա-



կան իրաւունքները: Դրանով իսկ այդ քաղաքացիները աւելի ու աւելի են մղում դէպի սոցիալական սանդղդակի ստորին աստիճանները: Գլենդելի հայերը ոստիկանութեանը մեղադրում են ռասիզմի և մարդատեսացութեան մէջ: «Մի քաղաքում, ուր բնակչութեան 40 տոկոսը հայ է, որոշում ընդունողների մէջ հայերը մէկ տոկոս էլ չեն կազմում: Այս անհամաչափութիւնը լուրջ խնդիրներ է առաջացնում և պիտի անհապաղ վերացուի», - ասել է Ա.Մելիքեանը:

Էյրզ հիւանդութիւնը սպանում է աշխարհին.-(Իրան օրաթերթ 29.6.00): ՄԱԿ-ի ցնցեցնող զեկոյցը ցոյց է տալի, որ Էյրզի վիրուսը «Բուստամայի», հարաւ ԱՖրիկայի և Չինքարուէյի երիտասարդութեան կէսին ոչնչացնելու է: ԱՖրիկայի կենտրոնական հանրապետութիւնում մեծ մասամբ դպրոցները արձակել են, որովհետև ուսուցիչների մեծ մասը Էյրզի հետեւանքով մահացել են: Ներկայումս 34.3 միլիոն վիրուսակիր գոյութիւն ունի աշխարհում, որոնցից 1.3 միլիոնը 15 տարեկանից ցած երէխաներ են:

ԱՄՆ-ը ծախողեց իր հակահրթրային երկրորդ փորձարկման մէջ.-(Բահար օրաթերթ 9.7.00): Այս փորձարկումը 100 միլիոն դոլարի ծախս էր ունեցել: Այս փորձարկումների դէմ բողոքել են Ռուսաստանը, Չինաստանը, Հրնդկաստանը և Երոպական երկրները:

Կովկասում և Միջին Ասիայում Արեւմուտքի ներթափանցումը զգացում է.-(Բահար օրաթերթ 5.7.00): Դռնաբեր քաղաքում Ռուսաստանի դեսպանը յայտնել է, որ ներկայումս այդ ներթափանցումը զգացում է, սակայն դա երկար չի տևելու և ապագայում պէտք է որոշ անցուղաբարձերի սպասել: Ռուսաստանը երբեք իր դիրքերից չի իջել այդ շրջաններում և ներկայիս նոր պայմաններում վերակառուցում է իր յարաբերութիւնները այդ երկրների հետ: ■

ՏԻՐՈՒՆԻ

Լոյս երկշաբաթերթը իր վշտակցութիւնն է յայտնում ներդրոյիչեալ նորոգ հանգուցեալների անմիջական հարազատների և բոլոր սգակիրներին:

- ◆ Սեդրակ (Սերոժ) Իսւճեան
- ◆ Սուրէն Դաւթեան
- ◆ Լինա Դաւթեան (Կիրակոսեան)
- ◆ Մարթա Թահմազեան
- ◆ Մարիան Փիրջանեան (Այւազեան)

ԹԵՀՐԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՊԱՏՊԱՄԱԴՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԿԸՅ-Ի ԱՍՈՒԼԻՍԸ ԹԵՀՐԱՆԱՇԱՅ ՍԱՍՈՒԼԻ ՇԵՏ

Ռ. Կորիւն
Ռ. Սարգսեան

«Լոյս» երկշաբաթերթ- Նախ շնորհակալ ենք, որ այս ասուլիսին հրաւիրել էք մեզ, պարզաբանելու Ձեր յետագայ աշխատանքները: Մենք ողջունում ենք այս ասուլիսի կազմակերպումը, որը մեր համայնքում առաջին անգամ է տեղի ունենում Ազգային Առաջնորդարանի կողմից:

Ո՞վ է հոգալու թեկնածուների ծախսը:

Կ.Ը.Յ.- Թեկնածուի պրոպագանդայի ծախսը կը վճարի այն միութիւնը կամ կազմակերպութիւնը, որը այդ թեկնածուին ոգետրում է, որ թեկնածու դառնայ, կամ ինքը թեկնածուն է հոգում ծախսը: Բացի այս երկու ձեւերից, ուրիշ ձեւ չկայ:

Կ.Ը.Յ.-ն ընտրատարածքների համար հաստատած թեկնածուների նկարը տպելու եւ փակցնելու է տեւալ ընտրատարածքում: Բայց այն թեկնածուն, որն ուզում է անայայնման ընտրուել, բնականաբար ինքը պէտք է հոգայ այդ ծախսերը:

«Լոյս» երկշաբաթերթ- Թեկնածուների պրոպագանդայի ձեւի եւ սահմանների մասին, արդե՞օր Կ.Ը.Յ.-ը որեւէ որոշում ներկայացրել է, թէ յետագայում պէտք է անի այդ: Այսինքն ազա՞տ է ով ինչ ձեւով ուզում է պրոպագանդ տանի, թէ Կ.Ը.Յ.-ն է պարտականութիւնը յանձն առնում:

Կ.Ը.Յ.- Անցեալում էլ Կ.Ը.Յ.-ը թեկնածուների համար պրոպագանդ չի տարել, բոլոր թեկնածուները մէկ ցանկով են ներկայացրել: Հիմա մամուլը թեկնածուներին կը ներկայացնի, դա իրենց իրատւոյնն է:

«Արաքս» ամսագիր- Ընտրութիւնը ցանկի գծով է լինելու, թէ անհատական. օրինակ քէ տողը ցանկի՞ն է քէ տալիս, թէ անհատին:

Կ.Ը.Յ.- Մրա մասին դեռ վերջնական որոշման չենք հանգել: Երբ որոշում եղաւ, կը տեղեկացնենք բոլորին:

Շայկական ռադիոստան- Թեկնածուները անհատական ելոյթներ ունենալու՞ են միութիւններում կամ ցանկացած մի տեղում:

Կ.Ը.Յ.- Բնական է, թեկնածուն կը դիմի որեւէ միութեան, եթէ համաձայնութեան եկան, նրան առիթ կը տան, որ նա իր տեսակետները փոխանցի ժողովրդին:

«Լոյս» երկշաբաթերթ- Ինչպիսի՞ կը լինի ընտրութիւնների օրայ աշխատանքի մեխանիզմը: Ընտրութիւնից յետոյ, ինչպէս նշած է օրենսդրութեան մէջ, թեկնածուները կարող են մասնակցել քէների հաշարկմանը:

Կ.Ը.Յ.- Դեռ որոշման չենք յանձնել, բայց նախագծեր ունենք. մեր մօտեցումը հիմնականում այն է, որ բոլոր թեկնածուները հնարաւորին չափ իրենց ներկայացուցիչներն ունենան, թէ ընտրութեան օրը եւ թէ քէների հաշարկման ժամանակ, որ մտահոգ չլինեն այդ գործընթացի մասին: Ընտրութեան օրայ ընթացքում այնպէս ենք ծրագրել, որ առաւօտեան հսկիչները քէատուփերը եւ միւս անհրաժեշտ պիտոյքները բերեն եւ տեղադրեն ընտրատարածքում, որից յետոյ կը սկսի ընտրութիւնները: Մտածում ենք, որ իւրաքանչիւր ընտրատարածքի համար մէկ հսկիչ ներկայացնի կրօնական Խորհուրդը եւ նախատեսում ենք, որ կնիքն էլ ինքը պատրաստի: Բայց յանձնախումբը դեռ վերջնական որոշում չի կայացրել: Թեկնածուները կարող են նաեւ իրենց հսկիչներն ներկայացնել: Մտածում ենք, եթէ այդ հսկիչների թիւը անցնի երեքից, վիճակահանութեամբ երեք հոգու ընտրենք: Քէները հաշուելու ժամանակ, բոլոր թեկնածուները կարող են ներկայ լինել:

«Ալիք» օրաթերթ- Արդե՞օր Կ.Ը.Յ.-ը թեկնածու առաջադրող անհատների պարագային նկատի ունի նրանց արժանատւութեան

հաստատման խնդիրը: Բացի կրթութիւնը, որեւէ չափանիշներ լինելու՞ են, որո՞նք են դրանք:

Կ.Ը.Յ.- Մենք պայմանների մէջ նկատի ենք ունեցել, որ թեկնածուն պէտք է ընտրատարածքում լաւ համբաւ ունեցող մէկը լինի: Բնականաբար ենթալանձնախմբերն են քննում բոլոր թեկնածուների թղթածրարները, եթէ որեւէ բան առաջացաւ, ապա ենթալանձնախմբը

պէտք է ասի, որ այսինչ պարունը այս պատճառով (մեզ պէտք է փաստեր ներկայացնի) լաւ համբաւ չունի եւ մերժի: Այդ թղթածրարը գալու է Կ.Ը.Յ.-ի մօտ, եթէ տեսնենք, որ փաստերը իրօք այդպէս են, մենք էլ կընդունենք այդ մերժումը, հակառակ դէպքում ենթալանձնախմբի տեսակէտը կը թեկնանենք եւ այդ անհատին կընդունենք որպէս թեկնածու:

«Ալիք» օրաթերթ- Արդե՞օր թեկնածուի արժանատւութեան գնահատման գործում նկատի է առնելու թեկնածուի բացասական գործունէութիւնը անցեալ տարիների ընթացքում:

Կ.Ը.Յ.- Բնականաբար ենթալանձնախմբերը կարգած են այդ քննութիւնը կատարելու համար: Այսինքն եթէ թեկնածուներից մէկը աստուած մի արասցէ մեր ազգային կեանքում լաւ գործունէութիւն չի ունեցել՝ ինչ որ պատճառներով, նա եթէ յանդգնութիւնն ունեցել է իրեն թեկնածու անելու, ենթալանձնախմբը պէտք է քննարկի:



Ասուլիս

եթե փաստարկներ ներկայացնեն, որ այդ անհատը ազգային-հասարակական կեանքում ինչ որ սխալ գործունեություն է ունեցել որևէ եկեղեցիում, դպրոցում, միությունում, բնականաբար կը մերժվի, իսկ եթե ասեկոսներ եղան՝ բնականաբար պետք է մերժել:

«Լոյս» երկշաբաթաթերթ- Լաւ համբաւ ունենալը, կամ արժանատի լինելը, ինչպէս հասկացանք, պէտք է փաստարկների հիման վրայ լինի եւ այնպէս չէ, որ ասեկոսների հիման վրայ ենթայանձնախումբը ինչ որ մի որոշում ներկայացնի: Ուրեմն, եթէ փաստացի չլինի, անհատական ճաշակների խաղեր տեղի կունենան: Արդե՞օք ճիշտ ենք հասկանում Ձեր միտքը:

Կ.Ը.Յ.- Բնական է անհատների ճաշակների վրայ չենք ուզում բողոքել:

«Լոյս» երկշաբաթաթերթ- Ընտրութիւնների թափանցիկութիւնը արդե՞օք պահպանելու է մինչեւ ընտրութիւնների վերջը: Բացի այս մասնույի ասուլիսը, նշեցիք, որ տարբեր տեղերում ժողովրդի հետ հանդիպումներ են տեղի ունենալու, արդե՞օք հայ մասնույը կամ ռադիոժամը



իրաւունք ունի այդ հանդիպումներին ներկայ լինել:

Կ.Ը.Յ.- Մենք մտածել ենք, որ ամիսը մէկ անգամ ձեզ հետ հանդիպում ունենանք եւ եթէ որոշումներ ունենք, փոխանցենք ձեզ, լսենք ձեր հարցերը, իսկ ձեռնարկներին բնական է բոլորը կարող են գնալ, դուք էլ իրենց հետ, այսինքն յատուկ սահմանափակում չկայ:

«Արաքս» ամսագիր- Թաղերում արդե՞օք կեանքի են կոչել ենթայանձնախմբեր:

Կ.Ը.Յ.- Դեռ ոչ, կեանքի չեն կոչել:

«Լոյս» երկշաբաթաթերթ- Պ.Ժ.-ի ընտրութիւնների հետ կապւած, արդե՞օք որեւէ տարբերութիւն գոյութիւն ունի 1983 թ. եւ վերջերս պարսկերէնով պետութեան ներկայացւած կանոնադրութիւնների միջեւ:

Կ.Ը.Յ.- Թոյլ տւէք այս հարցը բացատրի Թեմական Խորհրդի ներկայացուցիչը (պրն. Ռ. Կարապետեան), որովհետեւ այդ հարցով իրենք ենք զբաղւում:

Պրն. Ռուբիկ Կարապետեան- Շատ փոփոխութիւններ չի կրել, ինչ որ ներկայիս հայերէն կանոնադրութիւնն է, որը վաւերացւել է 1983 թ: Նախկին ընտրութիւններում էլ մենք հայկական ներքին կանոնադրութիւնից օգտուեցինք, հիմա էլ մենք մեր ներքին կանոնադրութիւնից ենք օգտուելու: «Ներքին Գործոց Նախարարութեան»-ը, ընդհանուր կէտերն են փոխանցելու եւ նրանք են հսկելու: Կանոնադրութիւնը փոփոխութիւն չի կրել:

Ինչպէս արդէն Սրբազան Հայրն ասաց, որոշ թերութիւններ գոյութիւն ունի, բայց կանոնադրութիւնների սկզբունքը եւ կառոյցը յատկապէս մեր սփիւռքահայ կեանքում շատ փոփոխելու հարց չունեն:

«Լոյս» երկշաբաթաթերթ-Կ.Ը.Յ.-ը ինչքա՞ն է գոյատեւելու, այսինքն ընտրութիւններից յետոյ յանձնախումբը կարո՞ղ է գոյատեւել: Ընտրութիւններից յետոյ մնան մի ասուլիս կարող է տեղի ունենալ, դա նախատեսւում է, թե՞ ոչ:

Կ.Ը.Յ.- Ինչպէս ասացի, ամիսը մէկ անգամ ասուլիս կունենանք: Կ.Ը.Յ.-ի գործունեութիւնը աւարտւում է, երբ ընտրւում է Պատգամաւորական Ժողովը, բողոքները քննուում են: Մանդատները տրւում են պատգամաւորներին, առաջին ժողովը գումարւում է եւ Կ.Ը.Յ.-ը հրաժարւում է եւ իր արխիւը տալիս է Կ.Ը.Յ.-ին:

«Արաքս» ամսագիր- Պետութիւնը ի՞նչ առումներով իրաւունք չէր տալիս, որ այս ընտրութիւնները 14 տարւայ մէջ կատարւեն:

Պրն. Ռուբիկ Կարապետեան- Այնքան որ մենք տեղեակ ենք, պիտի մենք ենթարկւենք երկրի օրէնքներին եւ երկրում էլ փոքրամասնութիւնների համար միայն մէկ օրէնք գոյութիւն ունի, որը փոքրամասնութիւնների հաւաքականութիւնների մասին է, այդ օրէնքում հոգւետը կառոյցների, եկեղեցիների եւ մեր ազգային իշխանութեան մասին օրէնք նախատեսւած չի եղել: Այսինքն մեր կանոնադրութիւնը չի համընկնում «Կուսակցութիւնների, միութիւնների եւ խմբակցութիւնների սահմանները ճշտող օրէնադրութեան» հետ եւ այդ պատճառով իրաւունք չէր տալիս եւ համադրութեան պահանջ էր դնում եւ որովհետեւ դա սկզբունքային հարց է, որ մեր եկեղեցին կառավարւում է հոգւետրականների եւ ժողովրդի ուղղակի մասնակցութեամբ, դա դժարութիւն էր ստեղծում: Այսինքն եթէ մենք ընդունեցինք, որ Առաջնորդը եւ Առաջնորդարանը առանձին լինեն եւ ինչ որ միութիւն գոյութիւն ունենայ եւ Թեմական Խորհրդի աշխատանքները վարի, երեւի շատ տարիներ առաջ այդ կանոնադրութիւնը (ընտրութիւնները) կը լինէր, բայց դա մեր եկեղեցու սկզբունքն է խախտւում եւ անընդունելի է, ուրեմն դա մենք չընդունեցինք: Նոյն ժամանակ պետութիւնը իր բարիացակամ վերաբերմունքը ունեցաւ, դրանով հանդերձ որ չէր համընկնում օրէնքի հետ, բայց մեր աշխատանքների համար խոչընդոտ չստեղծեց եւ իրաւունք տւեց, որ մեր աշխատանքները նոյն ձեւով շարունակւեն: Հիմա էլ կանոնադրութիւնը վերջնակաւորէն չի հաստատւել, մենք դեռ խնդիր ունենք *միութիւն* բառի վրայ: Դրանով հանդերձ, որ զիջել ենք եւ դա ընդունել, բայց մեր խնդիրը եւ իրաւունքը պահպանւում ենք եւ բողոքի տեղ էլ թողել ենք, բայց ընդունել են, որ Պատգամաւորական Ժողովի ընտրութեան իրաւունքը տան, յետոյ տեսնենք ինչ կարող ենք անել, կարո՞ղ ենք այդ դժարութիւնը հարթել, թէ ոչ: Մենք մըտահոգութիւն չենք տեսնում, որ *միութիւն* բառը ընդունելով մեզ համար որեւէ դժարութիւն կը լինի, բայց յոյս ունենք որ *միութիւն* բառն էլ փոխենք: Դժարութիւններ ունեն մատի միս փոքրամասնութիւնները, նրանք ժամանակին շատ տարիներ առաջ զիջեցին եւ տարբեր միութիւններ ստեղծեցին, որւնք բաւականին դժարութիւնների հանդիպեցին:

Ճար. տեսնել՝ էջ 15

30ԴԻԱԾ 40

ա- Թեմական Խորհուրդը, իր երկամեայ գործունեության առաջին տարւայ աւարտին, Պատգամատրական Ժողովին է ներկայացնում իր եւ իրեն ենթակայ մարմինների միամեայ գործունեության ամփոփ տեղեկագիրը:

բ- Թեմական Խորհուրդը, իր գործունեության երկամեայ շրջանը լրանալուց առնազն մէկ ամիս առաջ, կազմում է իր եւ իրեն ենթակայ մարմինների ու հաստատութիւնների գործունեութանց մանրամասն տեղեկագիրը եւ այն ներկայացնում Թեմի Պատգամատրական Ժողովին:

30ԴԻԱԾ 41

Թեմական Խորհուրդը նոր կալւածներ կարող է գնել կամ ազգապատկան կալւածները ծախել, փոխանակել եւ գրաւ դնել միայն թեմի Պատգամատրական Ժողովի հաստատութեամբ:

Ծանօթ. Վերոյիշեալ գործառութեան առաւելագոյն քանակը, որ Թեմական Խորհուրդը կարող է կատարել, առանց Պատգամատրական Ժողովի հաստատումը ըստանալու, իրաքանչիւր շրջան որոշում է Պատգամատրական Ժողովը:

30ԴԻԱԾ 42

ա- Թեմական Խորհուրդը, իր ընտրութեան քականից ամենամուշը մինչեւ երկու ամիս, կեանքի է կոչում ներքոյիշեալ մարմինները եւ նրանց կազմութիւնը ներկայացնում է Թեմի Պատգամատրական Ժողովին առ ի հաստատում, որից յետոյ եւ նրանց անմիջապէս հրաւիրում է աշխատանքի:

- Կրթական Խորհուրդ
- Ծխական Տուրքի Կենտրոնական Մարմին
- Դատական Խորհուրդ
- Տնտեսական Մարմին

- Մշակութային Մարմին
- Յարաբերական Մարմին
- Կարիքատրոններին օժանդակող Մարմին
- Գերեզմանատան Վարչութիւն
- Եկեղեցական Խորհուրդներ

Վերոյիշեալ մարմինների գործունեության ժամանակաշրջանը վերջանում է Թեմական Խորհրդի երկամեայ ժամանակաշրջանի հետ:

բ- Թեմական Խորհրդը ի պահանջել հարկի, կարող է լուծարքի ենթարկել վերոյիշեալ մարմիններից որեւէ մէկին եւ անմիջապէս կեանքի կոչել լուծած մարմնին փոխարինող մարմին, պայմանաւ, որ այդ մասին անմիջապէս զեկուցում ներկայացնի թեմի Պատգամատրական Ժողովին:

գ- Թեմական Խորհուրդը կարող է ի պահանջել հարկի, մասնագիտական բնոյթ ունեցող հարցերը քննելու ու դրանց վերահասու լինելու նպատակով վերոյիշեալ մարմիններից բացի, կեանքի կոչել նաեւ մասնագէտներից բաղկացած յանձնախմբեր:

6. ՇԱԶԻԵՆՆԻՉ ՍԱՐՄԻՆ

30ԴԻԱԾ 43

Թեմրանի Թեմի Հաշիւքննիչ Մարմինը, բաղկանում է 9-11 անդամներից եւ ընտրում է Թեմի Պատգամատրական Ժողովի կողմից, երկու տարւայ ժամանակաշրջանով, Թեմի բոլոր շրջանների ազգային մարմինների եւ հաստատութիւնների հաշիւները պարբերաբար քննութեան համար:

Հաշիւքննիչ Մարմնի կազմի ընտրութեան հետ միաժամանակ ընտրում են երեք անձնափոխանորդներ, որոնք, ի պահանջել հարկին, հրաւիրում են մասնակցելու Հաշիւքննիչ Մարմնի աշխատանքներին, ստացած քէւների հերթական կարգով:

Հաշիւքննիչ Մարմնի անդամները վերընտրելի են յաջորդ նստաշրջանների համար:

30ԴԻԱԾ 44

Թեմի բոլոր ազգային մարմինները, հաստատութիւնները եւ հիմնարկները, ի պահանջել հարկին, պարտաւոր են ամէն կարգի դիւրութիւններ ընդձեռելու Հաշիւքննիչ Մարմնին, իրենց հաշիւների քննութեան ընթացքում, նրա տրամադրութեան տակ դնելով՝ իրենց հաշիւական բոլոր մատենաները եւ ելք ու մուտքի գործառնութեան վերաբերող բոլոր փաստաթղթերը: Հաշիւքննիչ մարմինը պարտ է, որ քննութեան ենթարկի նաեւ տեալ հաստատութեան, շարժական եւ անշարժ գոյքերի ցանկը:

30ԴԻԱԾ 45

ա- Հաշիւքննիչ Մարմինը պատասխանատու է Պատգամատրական Ժողովին իր գործունեութեան համար:

բ- Հաշիւքննիչ Մարմինը, իր գործունեութեան երկամեայ շրջանի աւարտին, Պատգամատրական Ժողովին է ներկայացնում իր գործունեութեան ամբողջական շրջանի մանրամասն տեղեկագիրը:

դ-Հաշիւքննիչ Մարմինը՝ իր գործունեութեան ընթացքում յայտնաբերած թերութիւնների մասին անմիջապէս տեղեակ է պահում Թեմական Խորհրդին, որպէսզի վերջինս կարելիութիւն ունենայ նկատուած թերութիւնները վերացնելու:

7. ՔԱՐԱՆԱՅԻՑ ԺՈՂՈՎ

30ԴԻԱԾ 46

Թեմական Խորհուրդը՝ թեմակալ Առաջնորդի միջոցով, հրաւիրում է Թեմրանի Թեմի բոլոր ծխատէր քահանաներին գումարելու քահանայից ժողով: Թեմակալ Առաջնորդը մախազահում է քահանայից ժողովը: Նիստերը վարելու համար, քահանայ հայրերը ընտրում են իրենց դիւանը՝ բաղկացած մի ատենապետից եւ մի ատենադըպիից: Քահանայից ժողովը իր

անդամների միջից ընտրում է մի գործադիր մարմին Կրօնական Խորհուրդ անունով, բաղկացած՝ 5 անդամներից՝ երկու տարւայ ժամանակաշրջանով: Թեմակալ Առաջնորդի հրաւերով՝ Կրօնական Խորհուրդը ընտրում է մէկ ատենապետ եւ մէկ ատենադպիր: Կրօնական Խորհրդի անդամները վերընտրելի են:

30 ԴԻԱԾ 47

Կրօնական Խորհրդի իրատեսութիւններն ու պարտականութիւններն են՝

ա- Ջրադել կրօնական հարցերով եւ քահանայից դասին առնչող խնդիրներով եւ կայացնել համապատասխան որոշումներ:

բ- Քննել եկեղեցական արարողութիւնների եւ ծիսակատարութեանց խնդիրը եւ Թեմակալ Առաջնորդի յանձնարարութեամբ աշխատել միաձեռութիւն մտցնել թէ՛ ըստ ձեւի եւ թէ՛ ըստ բովանդակութեան ու տեղորոքեան:

գ- Քահանայից դասի մտաւոր մակարդակը բարձրացնելու եւ ճոխացնելու մտօք, հասարակագիտական, եկեղեցական պատմութեան եւ դաւանաբանական հարցերի շուրջ՝ կազմակերպել սեմինարներ եւ դասախօսութիւններ:

դ- Հանրութեանը եկեղեցուն ու կրօնին կապելու մտօք, կազմակերպել դասախօսութիւններ կրօնական բնոյթ կրող հարցերի շուրջ, բացատրել ժամերգութեան, ծեսերի եւ խորհուրդների իմաստը, վերլուծել պատարագի արարողութեան կատարումն ու զարգացման հերթականութիւնը:

ե- Քահանայից դասի վարկն ու հեղինակութիւնը բարձրացնելու, ինչպէս նաեւ հարագատութիւն մտցնելու մտքով, որորշում կայացնել որպէսզի քահանայ հայրերը ծրագրած ձեւով, ժամանակ առ ժամանակ, այցելութիւն տան իրենց ծխականներին, յատկապէս խոնարհ խաւերին, Քրիստոսի պատգամները փոխանցելու եւ օրհնութիւն տալու համար:

զ- Քննարկման ենթարկել դրպոցներում կրօնի դասաւանդու-

թեան հնարաւորութիւնները քահանաների միջոցով եւ համապատասխան որոշումները յանձնել Թեմական Խորհրդի ուշադրութեան:

է- Քահանայական ասպարէզը ատելի գրաւիչ դարձնելու եւ նոր թեկնածուներ հասցնելու նպատակով, հարցը ըստ ամենայնի քննարկել եւ գործնական առաջարկութիւններ անել Թեմական Խորհրդին:

8. ԿՐԹԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

30 ԴԻԱԾ 48

Կրթական Խորհուրդը կազմում է 9-13 անդամներից, որոնք նշանակում են Թեմական Խորհրդի կողմից՝ կրթադաստիարակչական ասպարէզում լաւատեղեակ ազգայիններից, երկու տարւայ համար:

30 ԴԻԱԾ 49

Կրթական Խորհրդի պարտականութիւններն են՝

ա- Հետեւել ազգային դպրոցների կրթադաստիարակչական ընդհանուր գործունէութեան:

բ- Իր կողմից նշանակած կրթական ներկայացուցչի կամ վերահսկիչի միջոցով՝ մօտիկից հետեւել ուսումնական ծրագրի գործադրմանը:

գ- Կրթական հարցերի կապակցութեամբ, յարաբերել պետական պատկան հիմնարկների եւ հաստատութիւնների հետ, Թեմական Խորհրդի գիտութեաբ:

դ- Չեռնահաս անձանց կամ յատուկ յանձնախմբերի միջոցով՝ կարգադրել ազգային դպրոցների կարիքներին համապատասխան դասագրքերի կազմութեան խնդիրը:

ե- Ի պահանջել հարկին, ընդհանուր կամ մասնակի փոփոխութիւններ մտցնել հայերէնով դասաւանդող առարկաների ծրագրի մէջ եւ գործադրութեան ոլնել Թեմական Խորհրդի հաստատումը ստանալուց յետոյ:

զ- Ազգային դպրոցների աշակերտութեան համար կազմակերպել ուսումնասիրութիւններ եւ տա-

րեկան քննութիւններ, ինչպէս նաեւ, հայերէն լեզուով դասաւանդող առարկաների առնչութեամբ, կազմել յառաջադիմութեան համեմատական վիճակագրոյցեր:

է- Ուսումնասիրել եւ ըստ հնարաւորին կազմակերպել հայագիտական դասընթացքներ:

30 ԴԻԱԾ 50

Կրթական Խորհուրդը, ամէն ուսումնական տարեշրջանից առաջ, իր վերահասութեան ենթակայ բոլոր կրթական հաստատութիւնների, ինչպէս նաեւ իր ուղղակի նախածեռնութիւնների համար (գիշերային դասընթացքներ, սեմինարներ, ուսուցչական կարգերի պատրաստում եւ այլն) կազմում է տարեկան ծրագիր եւ համապատասխան նախահաշիւներով ներկայացնում է Թեմական Խորհրդին՝ առ ի քննութիւն եւ հաստատում:

30 ԴԻԱԾ 51

Կրթական Խորհուրդը իր եւ իրեն վերահասութեան ենթակայ ուսումնական հաստատութիւնների, տնտեսական գործառնութեան տարեկան նախահաշիւը կազմելուց յետոյ , յանձնում է Թեմական Խորհրդին, վերջինս տարեկան նախահաշիւ մէջ ներառելու համար: ■

Շար. 4

ՑԱՄԱԿՑԱԿԱՆ



Æ օ³ օ Ì»½ մա՛է-
 ñՇէ, ı »Օ»İ³ օ³ Կն,
 ճñ İ»³ ԿնՇօ ³ Է Թ³ -
 օձı Ñ»է³ օ³ օ Շñ³ -
 Կ³ Ñ³ 0 Ñ³ Կñ³ Թ³ 0ı
 ³ ñօ»էı ³ . շı ,
 ձ³ ñձօէձօ՛

† ՇԻ . ԵԼԵՆԱ ԱԼԵՏԻՍԵԱՆԸ:

ՏԼՈՅՍՄ | »ñı Ե³ µ³ Ա³ Ա»ñԱՇ
 ԷՍµ³ . ñ³ Ի³ Կ Ի³ ½ՕԱ »օ ³ ñ-օ»էı Շ
 µ³ ԱՇԿԱ Շñ Էձñ³ ½. ³ օ օ³ օ³ Ի օձօԱՇօԿԿ շ
 Թ³ 0ı ԿձօՍ ³ ñօ»էı ³ Էլñ Ñ³ Է³ ñ³ Ի ձօԱ»³ -
 ԿԱ, »օ Ը³ Կ³ օ³ Կı Ñ³ Կ. ձօօ»³ ԷՇ
 ³ ԿՍՇՇ³ Ի³ Կ Ñ³ ñ³ ½³ Ի Կ»ñՇԿ:

«ՕժճաՕՅ»ԷՇ ԷճՕ՛՛՛

L. Ահարոնեան

Մեր գաղութի ազգային կեանքը աշխուժանում է և հետաքրքրության առարկայ դառնում:

Ուրախութեամբ նկատում է, որ 12-րդ Պատգամատրական Ժողովի ընտրության յանձնախմբի կողմից գանգալ յայտարարություններ են տեղի ունենում և Կիլիկիոյ Կաթողիկոսության կանոնագիրը, որ Հայոց Առաքելական եկեղեցու ոգին է ներշնչում ժողովրդին, ծանօթացնելու նպատակով տպագրում է «Այիք» օրաթերթում, «Լոյս» երկշաբաթաթերթում և «Արաքս» ամսագրում, որը գնահատելի աշխատանք է:

Պատգամատրական Ժողովը մեր ամենաբարձրագույն ատենան է և փաստը դա է, որ սոյն ժողովի միջոցով թեմիս Առաջնորդի առաջարկությունները միաձայնօրէն վաւերացնելուց բացի, կանոնագրի ճշտումների և փոփոխման, Թեմական Խորհրդի և հաշիւքննիչ մարմնի ընտրութիւնը և դրանց գործունէութեան քննարկումը կատարում է այդ ժողովի միջոցով:

Ըստ կանոնադրութեան, Պատգամատրական Ժողովի գործունէութեան ժամանակաշրջանը 4 տարի է, բայց 11-րդ շրջանը Պ.Ժ.-ի ներքին գործոց նախարարութեան կողմից կանոնագիրը չվաւերացնելու պատճառով, 14 տարի տեւեց:

Գնահատելի է, որ լրիւ կազմն մինչ այժմ պաշտպանում է իր ազգային պարտականութիւնը և որեւէ մի պատգամատր չի լքել իր դիրքը և հակառակն այս վերջին տարիներին անելի աշխոյժ կերպով մասնակցում է մեր ազգային կեանքի անցուղարձին:

Պատգամատրական Ժողովի անդամները ընտրում են թաղի լուսածափ և ազգային գործիչների և փորձառու և հանրայայտ թաղեցիներից, մի խօսքով ընտրող պատգամատրը պիտի ծանօթ լինի թաղի կենցաղին, կրթական, նիւթական, եկեղեցական և այլ հարցերին, որ Առաջնորդարանի աշխատանքի ծաւալում է գտնուում:

Լինելով ազգային և կրօնական փոքրասանութիւն, առաջին հերթին մենք հայերս ենթարկւած ենք երկրի օրէնքներին և այդ ոլորտում ունենք մեր շահերն ու իրաւունքները, որ մեր երկու յարգելի պատգամատրների միջոցով պաշտպանում են դրանք:

Մեր ներքին խնդիրները, մեր ազգային իշխանութեան միջոցով է կատարում, հոգեւոր Առաջնորդի առաջնորդութեամբ, որն պարունակում է գաղութի կրօնական, կրթական, մշակութային, ժառանգական, ամուսնական, մկրտութեան և այլ կարգի հարցեր: Պատգամատրական Ժողովի միջոցով ընտրում են Թեմական Խորհուրդը և Հաշիւքննիչ Մարմինը, որպէս գործադիր մարմիններ:

Նկատի ունենալով վերոյիշեալ բացատրութիւնները, մեծ դերակատարութիւն ունի նաեւ ընտրող անձնատրութիւնը, ըստ թեմիս կանոնադրութեան ընտրողի տարիքը պիտի 18 լինի: 12-րդ Պատգամատրական ընտրական յանձնախումբն առաջարկեց Թեմական Խորհուրդի կանոնադրութեան քւէարկութեան իրաւունք ունենալու տարիքը 18-ից փոխի 16-ի: Սոյն առաջարկը ներկայացուց

ժողովին երկու օրերում, թեր ու դէմ կարծիքներ եղան և հարցն քւէարկութեան ենթարկեց 27 դէմ, 5 թեր. և մէկ ձեռնպահ ձայներով մերժեց առաջարկը: Դէմ կարծիք ունեցողներն տրամաբանում էին թէ պատանին երբ 15 տարեկանից անցնում է 16-ի, իր նախքին տարիներում զբաղւած լինելով դասերով և ընկերական կեանքով կամ մարզական հարցերով, նրան չի հետաքրքրում ազգային կեանքը, նա այդ տարիքում որեւէ ուսուցում չի ստացել այդ ուղղութեամբ, որ կարողանայ ինքնուրոյն կերպով որոշի լաւն ու վատը, բայց 18 տարեկան պատանին արդէն երեք տարի է, որ իրեն թոյլ է տալիս ծանօթանալ և հետաքրքրել մեր ազգային կեանքով:

1998 թականին, Պատգամատրական Ժողովի յարգելի ատենապետ Դոկտ. Դաւթեանի առաջարկով մեր սիրելի համալսարանաւարտ երիտասարդների միջոցով թեմականախորհրդի նրաւորների վերաբերեալ բարձր որակի վիճակագրական թեր և ցուցատախտակներ ներկայացուցին: Կարեւոր թերից մէկն այս էր՝ Թեմական հայերի 57 տոկոսը ծանօթ չեն Պատգամատրական Ժողովի կամ Թեմական Խորհրդի և ընդհանրապէս մեր ազգային դրաւորի մասին, կամ էլ բոլորովին այդ հարցերի նկատմամբ անտարբեր են:

Այստեղ հարց է ծագում, որ մեր սիրելի 16 տարեկան երիտասարդների քանի՞ տոկոսն է ծանօթ մեր ազգային կեանքին: Արդե՞օք այս վերջին տարիներում որեւէ մի աշխատանք տարել է մեր ազգային իշխանութիւնների կողմից, որ մեր ժողովրդին ծանօթացնի ազգային իշխանութեան գործունէութեան հետ:

Ես չեմ ցանկանում թերագնահատել մեր սիրելի 16-17 տարեկան երիտասարդներին, նրանք վստահօրէն ծանօթ են մեր երկրի քաղաքական, տնտեսական և տարբեր հարցերին, նրանք սնում են երկրում տեղի ունեցած հետաւատատեւութեան տարբեր միջոցներից, օրաթերթերից, իրենց ճաշակի համեմատ ընկերական շրջաններում, դպրոցներում և այլ միջավայրերում քաղում են երկրի քաղաքական և ընդհանուր տեղեկութիւնները և նոյն պէս է մուտուլման երիտասարդը նաեւ, յաւելեալ ուրբաթօրեայ աղօթքին մասնակցել ու լսել, այդ գիտելիքներով էլ մասնակցեց խորհրդարանի ընտրութիւններին: Չպիտի մոռանանք, որ իսլամական օրէնքի համաձայն, 15 տարեկան տղաներն ու 9 տարեկան աղջիկներն չպիտեհաս են համարում, բայց մենք առաջնորդում ենք մեր եկեղեցական օրէնքներով:

Բայց մեր 16 տարեկան պատանիներն որտե՞ղ են սովորում մեր ազգային կեանքին վերաբերող հարցերը: Դպրոցում հազիւ կարողանում են մի քանի ժամ հայերէն սովորել, դրանց քանի՞ տոկոսը միութեանական աշխատանքների է մասնակցում և ո՞ր միութիւններն են որ նրանց ծանօթացնում են մեր ազգային կեանքին: Նա պատգամատր ընտրելու պարագային կամ պիտի տարբեր մարդկանց կարծիքն ունենայ, կամ էլ իրեն պիտի ասեն թէ ում ձայն տայ, երկու պարագայում էլ թելադրանք է լինում:

Վեհափառ Հայրեպատն իր խօսքերում հնիգժբթ. յուլիսի 13-ին Պատգամատրական Ժողովի ընթացքին ասեց թէ,- Մենք մեր ազգային կեանքում պիտի կատարենք փոփոխութիւններ և պիտի որակն նկատի առնենք, որ մեր ապագայ ծրագրերը իրագործեն: Նա շեշտեց թէ,- Մեր եկեղեցին պարունակում է ազգային, և ոչ քաղաքական բնոյթ, քւէարկողների թիւը շատանալով ընտրողների որակը չի ապահովի:

Շար. տեսնել՝ էջ 12-ում

Ստացած գրութիւններ

«Լոյսի» համար 7-ում տպագրուել էր Ազգ. Առաջնորդարանի նամակը, այդ կապակցութեամբ ստացուել է պատասխան գրութիւն, որը յարգելով մամուլի օրէնքը, ներկայացնում ենք ստորեւ (Գրութեանը կցած են եօթ փաստաթղթեր, և Յշմաթիւ քաղաքամասի բնակչութեան խնդրագիրը ուղղած Սրբազան հօրը, Տէր Մուշեղին մի նոր առիթ տալու վերադառնալ իր հոգևոր աշխատանքին, որին և կցած են քանի տասնեակ ստորագրութիւններ՝ 5 էջերում):

Խնք.

Առ ի տեղեկութեան յարգելի ժողովրդի, թեմի յարաբերական մարմնի նամակի պատասխանը մի քանի տողով ներկայացնում ենք:

1-Նախ և առաջ պէտք է հարց տանք թե՛ մեր ժողովուրդը Քահանայ ձեռնադրութեան պարագայում մինչև ինչ՞ աստիճան դերակատար է, ընդունած կարգը այս է՝ ձեռնադրելու ժամանակ կոչ է արում ժողովրդին, ժամերգութեան ժամանակ և ժողովրդից հարց է տրում թե՛ այս անձնավորութիւնը արժանի է թե՛ ոչ, և վերջնականապէս ժողովրդի համաձայնութեամբ քահանայ է օծում, իսկ ինչ մնում է կարգալոյծ անելու պահին, ժողովրդի պահանջը դերակատար չէ՞, և համաձայնութիւնը ոտնահարում է՞, արդեօք՞ քահանան ձեռնադրում է թեմականի թե՛ ժողովրդի համար:

2- Ինչպէ՛ս գրած է «Ալիք» օրաթերթի ապրիլի 13-ի համարում, «թեմականի հանդիպումը Հեշմաթիւ քաղաքամասի ժողովրդի հետ» վերնագրով, այդտեղ պ. Ռուբիկ Կարապետեանը բաղի ժողովրդին աղանդատը է կոչել, բայց հիմա «Լոյս» թերթում հենց նոյն ժողովուրդը դառել են Հեշմաթիւ քաղաքամասի սիրելի ժողովուրդ, կոչեցեալը իր խօսակցութիւնը շարունակելով քահանայի հարցի վերաբերեալ շեշտել է թոյլ տալ հենց կրօնականները այս խնդիրը լուծեն, իսկ վճռի ժամանակ նորից կարդում ենք «Ալիքի» չորեքշաբթի 26 - Ապրիլի համարում որ «Թեմիս կրօնական և թեմական խորհուրդները մեր նախագահութեամբ գումարած իրենց վերջին խառն միտքին,» այս որոշումը կատարել են, այստեղ ես հակասութիւն է առաջանում իրենց խօսքի մէջ՝ քանի որ պարզապէս ակնհայտ է ենք լինում ոչ կրօնական անձնավորութիւնների որոնք դերակատար են եղել այս որոշման մէջ:

3- Ինչ մնում է հանգուցեալ Սրբազան հօր հայրական խրատներին ու նկատողութիւններին, պէտք է յիշեցնել որ հանգուցեալ սրբազան Հայրը 40 տարիներ Թեհրանի համայնքի հետ ապրելով լաւ կերպով ծանօթ էր թե՛ քահանաներին և թե՛ մեր ժողովրդին, արդեօք՞ կայ և գոյութիւն ունի միայն մէկ տող և ոչ անել մի դժգոհութեան գրութիւն ուղղած ինձ Սրբազան հօր ձեռամբ և ստորագրութեամբ իմ քահանայութեան գործունէութեան ընթացքում, որովհետև ինչպէս ասել է միշտ արխիմանդր նկատի են առնում, բայց կայ և գոյութիւն ունի որոշ քահանաների վերաբերեալ դժգոհութեան գրութիւններ ինչպէս մէկ օրինակ 2 Ապրիլ 1996-ի թիւ 202-549 գրութիւնը:

Հետաքրքիր է որ՝ հենց այս նամակին վերաբերող Քահանան կրօնական խորհրդի անդամ ընտրվելով այս որոշման մէջ դեր է ունեցել:

Աետարանում տրւած է «Եղբայր թոյլ տուր քո աչքի շիւղը, հանեն, բայց իր աչքի գերանը չի տեսնում»

Պարզ է միայնակ դատարան գնացողը ուրախ կը վերադառնայ.

4- Գրած է, չի կատարել եկեղեցական և քահանայական առօրեայ պարտականութիւնները, իմ փաստը ժողովուրդն է: Որոնց դուք աղանդատու էք կոչել:

Տնօրինքի կատարման վերաբերեալ տեսնել Ալիք օրաթերթի 18 յունարի համարի էջ 6-ը. մատնելը հեշտ է վալ մատնողին դատաստանի ժամանակ:

Ինչ մնում է տիրացուի վերաբերեալ, արդեօք՞ Հայաստանեաց Առաքելական եկեղեցում տիրացու բառը գոյութիւն է ունեցել թե՛ ոչ՞.

Նշխարի և մասի բաժանման բացատրութեան համար կը դիմենք Հանգուցեալ Արտակ Սրբազանի «Հայ Եկեղեցոյ տօները» գրքի էջ 221-ին «Նշխար և մասը պատրաստում է եկեղեցում, հաւատացեալներին բաժանելու համար, և Նշխարը գործածում է Սուրբ պատարագի սրբագործութեան և որպէ՛սզի հաղորդութիւն տրւում է հաւատացեալներին, բայց այդ տեղ երրորդ նշխարի մասին ոչ մի բացատրութիւն չկայ որ այդ էլ

նորից պատրաստում է մի ոչ կրօնական և աշխարհական անձի միջով և ցրում դռնից դուռ միայն նիւթական պատճառներով. գրած է նաև գերեզման օրհնէք չի կատարել, փաստը նորից 18-Գեկտ. 1999 «Թ. Հ. Թ. քահանայից Դաս» է, որ այդ նամակում որևէ կերպով գոյութիւն չունի իմ անունը քահանայի դասի շարքում ոչ հին և ոչ՛ էլ նոր հանգստարանում :

5- Հոգևորականի առևտրի վերաբերեալ, մինչև օրս էլ ոչ մի Թեմական անձնավորութիւն չի հետաքրքրել թե՛ ինչու՞ այս գործով են զբաղել, բայց հիմա կը պատասխանեն:

Նախքան քահանայ ձեռնադրելու խնդրի են ունեցել, խանութս փակել են, որպէսզի լրիւօրէն յանձնեն քահանայութեան պաշտօնին բայց վերջին երկու տարւայ ընթացքում, բոլոր նիւթական միջոցները խլած տեսնելով և նեղ դրութեան մէջ գտնվելով, նորից սկսեցի աշխատանքս, փաստը թեմական խորհրդի 19 Օգոստոս 1998 թ. 261-1546 թիւակիր նամակ է, ըստ որի վճարում էր ամսական 600,000 դրաւ, նորից 27-փետրուար 1999 թ. 202-321, որում նաև գրած է ձեռ նախքին ծխի (Չարքէշ) արարողութիւններից ստացած դրամը և առաջնորդարանի կողմից վճարող նպաստը (261-1546 թիւ վերաբերող նպաստ) գեղչելու են:

...Դուք դատէք թե՛ այս պարագայում ի՞նչ պէտք է անել, ճիշտ է չը պէտք է խանութս կանգնէ՞ր, այլ որոշ քահանաների մնան պետք է մեծագումար դրամներ պարտք վերցնէ՞ր և ժամանակին չը վերադարձնէ՞ր ու նաև հոգևորականի մէկ վայել զբաղմունքներ կատարէ՞ր, սրա փաստն էլ հենց նշած համարով նամակն է, այժմ գոյութիւն ունի առաջնորդարանի արխիմանդր, և ուրիշ շատ փաստեր: ... Երբ որևէ քահանայ են ձեռնադրում այսպէս են ասում, «գուր քահանայ ձեռնադրեցիր յալիտեան մեկիքսեղեկի կարգի պէս» (Պօղոս առաքեալ թուրք երրայեցիս զլ. է համար 17). այսպիսով պէտք է ասել չի լինի քահանայի օծումն առնել, թե՛ այդ դեպքում ուրեմն քահանայի բոլոր կատարած խորհուրդները ոչնչացած են համարում:

**Սուշեղ քն. Աւետեան
Յուլիսի 3, 2000 թ.**

Ճար. էջ 11-ից

կան բնոյթ, քլտարկողների թիւը շատանալով ընտրողների որակը չի ապահովի:

Պատգամատրական Ժողովի կանոնադրութեան փո-խելու հարցը, շատ մտածած եւ ճիշտ որոշում էր, հակա-ռակ դրան, որ տարբեր արտայայտութիւններ են լինում, թե՛ նորից պիտի վերացի այդ որոշումը կամ ներքին գործը նախարարութիւնը կարող է մերժել այդ որոշումը, որը չի համընկնում երկրի ընտրական օրէնքներին, ըստ որի 16 տարեկան պատանին ընտրելու իրաւունք ունի:

Որոշումն կայացել է ժողովրդավարական կերպով, քլտարկութիւնը տեղի է ունեցել օրինական եւ առաջարկը մեծամասնութեամբ է մերժել, այդ որոշումը պիտի յարգի, թե՛ ոչ դա Պատգամատրական Ժողովին հարաւածելու եւ թուլացնելու բնոյթ կունենայ, եւ դա սպագայում անբարենապաստ անդրադարձ կունենայ մեր ազգային կեանքում:

Սիրելի երիտասարդներ, սպագան ձերն է եւ աշխատանքն էլ չի վերջանում: Գալիք Պատգամատրական ընտրութիւններին կը մասնակցեք անելի հմուտ եւ մեր անձնական կարծիքով կընտրեք ձեր ցանկացած պատգամատրին:

Այսօր Թեհրանի համայնքն ունի մի գիտակից եւ գործունէայ Սրբազան Առաջնորդ, որ գաղութի համար բաւականին յուսարիչ բարեփոխումներ է նախատեսել: Վստահաբար դա պիտի մեր ժողովրդին եւ մանաւանդ մատաղ սերնդին էլ անելի ծանօթացնի մեր եկեղեցուն եւ մեր ազգային դրածօքներին, որոնց աշխատանքի կենտրոնում է մեր Առաջնորդարանը եւ թեհրանա-հայութեան համար ամենակարեւոր կենտրոնն է համարում: Մենք պիտի նեցուկ համոխիսանք մեր հոգեւոր Առաջնորդին, որպէսզի նա կարողանայ իր ծրագրերը յաջող կերպով իրականացնի: ■

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

(Պատմական ակնարկ)

Հայ իրականության մեջ պատմա-ամենաարհիվմի գաղափարը առաջին անգամ արծարծել է 18-րդ դարում հեռավոր Հնդկաստանում Շ. Շահամիրեանի գլխավորած հայ հայրենասերների Մադրասի խմբակի կազմում ու 1773թ. հրատարակած «Որոգայթ Փառաց» գրքում: Նրանում ապագայ ազատագրած Հայաստանի բարձրագույն ներկայացուցչական մարմինը՝ խորհրդարանը կոչվում էր «Հայոց տուն»:

Արդեն 19-րդ դարում սահմանադրական-խորհրդարանական գործունեության առաջին նախաքայլը կարելի էր համարել 1860թ. արեւմտահայերի Ազգային սահմանադրութիւնը: Այս իւրօրինակ սահմանադրութիւն՝ փաստաբղթի համաձայն սկսեց գումարել 140 պատգամաւորներից (երեսփոխաններից) բաղկացած Ազգային ընդհանուր ժողովը, որը զբաղւում էր Օսմանեան Թուրքիայի գերիշխանութեան տակ գտնուող արեւմտահայ համայնքի ներքին կեանքի, ազգային, կրոնական, կրթամըշակութային եւ այլ գործերով ու խնդիրներով:

1917թ. Փետրարեան Յեղափոխութիւնը մեծ փոփոխութիւններ ու հասարակական-քաղաքական տեղաշարժեր առաջացրեց հսկայածաւալ ռուսական կայսրութիւնում եւ այդ թում Անդրկովկասում ու Արեւելեան Հայաստանում: Սկսեցին առաջին քայլերը երկրի ժողովրդավարացման ուղղութեամբ: Չարթօնք ապրեց ազգային կեանքը, աճեց ազգային ինքնագիտակցութիւնը: Հայ քաղաքական կուսակցութիւնների (ՀՅԴ, Սոցիալդեմոկրատ, Էսէժ, «սպեցիֆիկ» եւ այլն) նախաձեռնութեամբ նախապատրաստուեց եւ 1917թ. սեպտեմբերի վերջ, հոկտեմբերի սկզբներին Թիֆլիսում գումարեց արեւելահայերի համագումարը (համախորհրդակցութիւնը), որին մասնակցում էին քառանդան

համակարգով ռուսահայերի կողմից ընտրւած 203 պատգամաւորներ:

Արեւելահայոց համագումարը ըզբաղեց տարածաշրջանի ներքին եւ արտաքին քաղաքականութեան, Անդրկովկասի վարչական բաժանումների, գեմատուներ սնցնելու, ազգային զօրքի կազմակերպման, գաղթականութեան եւ այլ խնդիրներով: Համագումարի աշխատանքների վերջնափուլում բազմակուսակցական հիմքի վրայ ընտրեց 15 հոգուց բաղկացած գործադիր մարմին՝ Հայոց (Կենտրոնական) Ազգային Խորհուրդ: Կուսակցութիւնների քաղաքական կշռին համապատասխան Հայոց Ազգային Խորհուրդը ներկայացնում էին ՀՅԴ՝ 6, ՀԺԿ՝ 2, Սոցիալդեմոկրատ՝ 2, Էսէժ՝ 2 եւ անկուսակցական՝ 3 անդամներ: Խոր-



հրդի նախագահն էր Ա. Ահարոնեանը (ՀՅԴ): Հայոց Ազգային Խորհուրդը որպէս գործադիր մարմին փաստօրէն ստանձնեց արեւելահայ հատուածի քաղաքական կեանքի դեկավարութիւնը:

Բացի Ազգային խորհրդից, դարձեալ կուսակցական համամասնութեան սկզբունքով, կազմեց նաեւ 35 հոգուց բաղկացած օրէնսդիր մարմին՝ Ազգային Ժողով, որը հանդիսանում էր արեւելահայութեան ժամանակատր ներկայացուցչական օրէնսդիր մարմինը: Տեղեքում հիմնրել եւ գործում էին տեղական հայ ազգային խորհուրդներ՝ Երեւանի, Բարսի, Չանգեզուրի, Արցախի, Նախիջեւանի, Այապալաքի եւ այլն: Իսկ 1917թ. մայիսից հիմնել եւ գործում էր նաեւ արեւմտահայերի գործադիր մարմինը:

1917թ. Հոկտեմբերեան յեղափոխութիւնը արմատապէս փոխեց

իրերի դրութիւնը Անդրկովկասում: Դեպքերի աննպաստ զարգացման հետեւանքով Կովկասեան ռազմա-ճակատը քայքայեց, Թուրքիան անցաւ յարձակման եւ ներքին ու արտաքին ազդակների թելադրանքով Անդրկովկասը կարեց Ռուսաստանից ու փաստօրէն անկախացաւ:

Այն բանից յետոյ, երբ 1918թ. յունւարի 6-ին խորհրդային կառավարութիւնը ցրեց ժողովրդավարական ճանապարհով ընտրւած համառուսաստանեան Սահմանադիր ժողովը, հիմնականում դրա Անդրկովկասեան հատուածի պատգամաւորների թիւ, կուսակցական համամասնութեան սկզբունքով, եռապատկման միջոցով կազմեց Անդրկովկասեան սէյմը (խորհրդարանը): 1918թ. փետրւարի 10-ին բացւած Սէյմի 125 պատգամաւորներից 32-ը Ս.Գ. մենշեւիկ էին, 30-ը՝ մուսավաթական եւ 27-ը՝ դաշնակցական, մնացածը՝ այլ կուսակցութիւններից ու ազգային ներկայացուցիչներից: Ազգային կազմի տեսակէտից Սէյմի պատգամաւորութեան շուրջ մէկ երրորդը եղել են հայեր՝ այդ թում 27-ը՝

ՀՅԴ խմբակցութիւնից (Ռ. Չորեան, Հ. Օհանջանեան, Հ. Չարիեան, Յ. Քաջազունի, Ս. Տիգրանեան, Ալ. Խատիսեան, Խ. Կարճիկեան, Մ. Յարութիւնեան եւ ուրիշներ), 4-ը՝ սոցիալդեմոկրատ մենշեւիկեան խմբակցութիւնից (Ա. Չուրաբեան, Ս. Փիրումեան, Ա.Երզնկեան, Գ. Տէր Դազարեան), 3-ը՝ Էսէժ խմբակցութիւնից (Լ. Աթաբեկեան, Ս.Սահակեան, Լ. Թումանեան), 3-ը՝ մուսաւաթ խմբակցութիւնից եւ այլն: Պէտք է ասել, որ Սէյմի հայ պատգամաւորները խորհրդարանական աշխատանքի որոշ փորձ ձեռք բերեցին, որը, ինչ խօսք, յետագայում օգտակար եղաւ Հայաստանի ապագայ խորհրդարանական աշխատանքների ժամանակ: ■

Ճար. 1

ՊԱՐՍԿԱԿԱՆ ՄԱՍՈՒԼԸ ՇԱՅ ՊՈԷԶԻԱԻ ՄԱՍԻՆ

Շ. Շ. Սովսիսեան



Յայտնի է, որ ազգային գրականութիւնների փոխազդեցութեան հնուց գոյութիւն ունեցող պրոցեսում միշտ առանձնապէս մեծ է եղել այն գրականութիւնների, այն գրողների ու երկերի դերը, որոնք գեղարուեստական կատարել կերպարներով արտացոլել են գրականութեան առաջադիմական երևոյթները, նպաստել են դէպի հասարակական յարաբերութիւնների բարձր ձևերը իրենց ժողովրդի կատարած առաջընթացին:

Սկսած 1940- ական թթ. դարերի ունեցող հայպարսկական գրական առնչութիւնները թևակոխում են պատմական նոր փուլ: Իրանում, գլխատրապէս Թեհրանում հրատարակող մի շարք թերթեր, ինչպէս «Մաադաթ բաշար» («Ժողովրդի երջանկութիւն»), «Աթաշ» («Կրակ»), «Մարդոմ» («Ժողովուրդ»), «Մուզանդ» («Երդում»), «Մեթաբէյէ սոլի» («Խաղաղութեան աստղ»), «Փայամէ նովին» («Նորագոյն պատգամ»), «Արմադան» («Պարզ»), «Մոխան» («Ժօղ»), «Խուշէ» («Հասկ») և այլ գրական ամսագրեր ու թերթեր, մեծ սիրով ու պատրաստակամութեամբ են տպագրում հայ քանաստեղծների ստեղծագործութիւնները:

Պարսիկ նշանաւոր քանաստեղծներ ու գրականագէտներ Նադերփուրը, Սայէն, Բամդադը, Բ. Իմանին, Թենուր Գորգինը, Ահմադ Նուրիզադէն և ուրիշներ, գնահատելով հայ հեղինակների ստեղծագործական բարձր արեստը, հանդէս եկան մամուլի էջերում: Ստորև ներկայացնում ենք մամուլից քաղած գնահատականները:

Չորս հարիւր տարի է, որ հայերն ապրում են Իրանում, սակայն դժբախտաբար, մինչև այժմ լուրջ նպատակադրում չի եղել պարսիկ ժողովրդին ծանօթացնելու հայոց պատմութեանը, մշակոյթին, լեզվին ու գրականութեանը: Իրօք, շատ ուրախալի է, որ մի խումբ պարսիկ ու հայ մտարականներ ձեռնամուխ են եղել այդ շնորհակալ գործին: Մի գործ, որը աստիճանաբար պարսիկ ժողովրդին հնարատրութիւն կը տայ գաղափար կազմելու հայ գրականութեան մասին:

«Փայամէ նովին» («Նորագոյն պատգամ») ամսագիր, Թեհրան, 1964, No 8, էջ 80

Հայ քանաստեղծների համեմատութիւնը մեր վերջին յիսնամեակների քանաստեղծների հետ զարմանահրաշ տարբերութիւն է յայտնաբերում: Հայ քանաստեղծները, որոնք ծնել են մի տարաբախտ ազգի

ծոցում, թէկուզ դարեր շարունակ ապրել են գերութեան մէջ, այնուամենայնիւ չեն դադարել պայքարելուց: Եթէ որևէ աչքի ընկնող հայ քանաստեղծի կեանքն ու գործը ուսումնասիրի, կը պարզվի, որ դա յանուն ազատութեան հայ ժողովրդի հերոսական պայքարի մէկ դրագն է: Մենք ոչ մի ճանաչած հայ քանաստեղծ չգիտենք, որի սիրտը չի տրոփել իր հայրենիքի վեհութեան և իր ազգի առաջադիմութեան սիրոյն...:

«Խաթ վա խուն» («Շող եւ այրիւն») ամսագիր, Թեհրան, 1967, No 303

Աւետիք Իսահակեանի «Արու- Լալա- Մահարի» պոէմի տպագրումը «Արմադան» ամսագրի էջերում գրաւեց բովանդակ աշխարհի, հայ գրողների և մամուլի ուշադրութիւնը: Մենք ևս մեր հերթին ողջունում ենք հայ մամուլին, շնորհապարտ ենք զգում մեզ և խոստանում ենք, որ մեր հնարատրութեան սահմաններում կը ներկայացնենք, հայ գրականութիւնն ու հայ գրողներին, որոնք այնքան սիրողներ ու համակրողներ ունեն Իրանի հասարակութեան մէջ:

«Սեփիդ վա սիահ» («Սպիտակ եւ սեւ») ամսագիր, Թեհրան, 1968, No 28, էջ 7

Չնայած հնամենի հայ ժողովուրդը դարեր շարունակ եղել է հարևանը և պատմական սերտ կապեր է ունեցել մեր երկրի հետ, սակայն պատշաճ կերպով չի կարողացել իր երկուհազարամեայ անցեալ ունեցող գրականութեան հետ ծանօթացնել մեզ: Նախ ինչ էլ որ լինի պատճառը, իրականութիւնն այն է, որ այդ ուղղութեամբ կատարած քայլերը դեռևս աննշան և չնչին են, և մեր ժողովուրդը լիակատար ծանօթ չէ այնպիսի մի առաջատր մշակոյթի և գրականութեան հետ, որոնցով կարող է հպարտանայ հայ ժողովուրդը:

«Սոխան» («Խօսք»), գրական ամսագիր, Թեհրան, 1969, No 8, էջ 855

Որտեղ հայ քանաստեղծութիւն տեսնէք, մի պահ կանգ առէք և նախքան ընթերցելը մտովի պատկերացրէք տանջանք, գերութիւն, կրակ, արիւն, պայքար և, վերջապէս, դրանց հետ միաժամանակ՝ ամենահիասքանչ ազատութիւն բառերը: Որովհետև ամէն մի հայ քանաստեղծութեան մէջ դուք կը զգաք նրա յորինողի՝ կեանքի խոր և միևնոյն ժամանակ անդադարտ ու ինքնատիպ ընկալումը:

Որտեղ հայ քանաստեղծութիւն տեսնէք, կանգ առէք, խորհրդածութեամբ մտածէք, որովհետև հայ քանաստեղծութիւնը կանգնած է իր դարատր անցեալի փառապանծ ու անասան պատմանդանի վրայ:

Որտեղ հայ քանաստեղծութիւն տեսնէք, կանգ առէք, խորհրդածութեամբ մտածէք և յետոյ հպարտութեամբ լցած ընթերցէք այն: Որովհետև հայ ժողովուրդը միշտ էլ մշակոյթի և գիտութեան գովերգողն է եղել և նրանց զարգացման համար չի խնայել իր ուժերը:

Մշակոյթ

Չէ՞ որ դարերի խորքից մեզ հասած «Աստուածաշնչի» հայերէն սքանչելի թարգմանութիւնը ստացել է «Թարգմանութիւնների թագուհու» համբարը:

Հայ բանաստեղծութիւնը ամբողջութեամբ վերցած մարդկային խոհերի, յոյզերի ու զգացմունքների գեղարուեստականօրէն կախարդիչ արտայայտութիւնն է:

Հայ բանաստեղծութիւնը երբէք կեանքի մակերեսին թրթռացող խօսք չէ, որովհետև հայ բանաստեղծը կեանքի խորաթափանց նայելուց զատ, ուրիշ նպատակ չունի:

Եթէ այցի ես գնում հայ բանաստեղծութեանը, նախքան գնալը՝ հաշի առ, դու ներս ես մտնելու ամբողջ աշխարհով մէկ սփռած հինգ միլիոնանոց հայ ժողովրդի լեզուի և գրականութեան տաճարը: Ուրեմն զգոյշ, որ մշակոյթի և գրականութեան վեհութիւնն ու փառքը չղողացնեն սիրող և զարմանքը չպատի քեզ:

Հայ բանաստեղծութիւնը դա տառապեայ, սակայն մի առաջադէմ ժողովրդի բանաստեղծութիւնն է: Մի ժողովուրդ, որը խոհուն է և ստեղծագործ: Մի ժողովուրդ, որի նւիրական կեանքն ու արուեստը երբէք թոյլ չեն տուել, որ «սնանկութիւնը» ոտք դնի իրենց վսեմութեան սեմին:

Հայ բանաստեղծութիւնը դա ժողովրդի հոգևոր ճիչն է: Մի ժողովրդի, որը երկար ժամանակ, առանց որևէ հարուցող պատճառի, տանջել է անզգամ ու զարշելի մադկանց ճիրաններում է եղել: Մի ժողովուրդ, որը հազար վեց հարրիւր տարի առաջ գրում էր տառերով և ուներ հարուստ մշակոյթ և գրականութիւն: ■

Ճար. 1



Ոսկէ Օղակներ

ԼՈՅՍ երկշաբաթաթերթը ջերմօրէն շնորհաւորում է նոր ամուսնացած սիրելի

- ♥ Փոլինա Դաւթեան - Ադիս Խէչումեան
- ♥ Ռիտա Յամբարչեան – Ժիլբերտ Կարապետեան
- ♥ Իւետ Նազարեան - Անդրէ Յախվերդեան
- ♥ Ադրինէ Ռաթոսեան - Անդրէ Ալլահվերդեան
- ♥ Ալենուշ Բալայեան – Ռուանտ Քարիմ Սասիհի
- ♥ Միգանուշ Իսկանդարեան – Ռայմոնդ Յարութիւնեան
- ♥ Ալինա Աւետիսեան – Ռազմիկ Յարութիւնեան
- ♥ Ռիտա Ռէյհանեան - Էդլին Գրիգորեան

գոյգերին:

Ճար. էջ 8-ից

«**Լոյս**» երկշաբաթաթերթ- Նոյն դժարութիւնները հնարաւոր է մեզ համար առաջանան:

Պրն. Ռուբիկ Կարապետեան- Ոչ, որովհետև նրանք իրենց կառոյցն էլ փոխեցին, այսինքն իրենց հոգեւոր իշխանութիւնն անջատեց աշխարհակահից: Բայց մեր պարագայում, որովհետև կառոյցը պահպանել է, օրինակ մեզ Պ.Ժ.-ի ընտրութեան իրաւունք են տուել եւ նոր Առաջնորդ են ընտրուել եւ միւս բաժիններն էլ կան, մեր կառոյցը չի փոխուել: Կանոնադրութեան մէջ յստակ ասած է, որ ամէն մի թեմ պիտի ունենայ մէկ Առաջնորդարանական միութիւն: Հիմա եթէ մէկ թեմ երկու ազգային Առաջնորդարանական միութիւն ունենայ, դա ուրիշ հարց է: Մենք չենք խրախուսում դա:

«**Լոյս**» երկշաբաթաթերթ- Ներկայ Թեմական Խորհուրդը կամ Պ.Ժ. ընտրութիւններից առաջ, արդե՞օք հաշիւտութեամբ հանդէս կը գայ ժողովրդի առջեւ եւ եթէ հանդէս կը գայ, արդե՞օք այդ Թեմական Խորհուրդը հաշիւտու է 14 տարւայ աշխատանքների համար, թէ միայն իր ժամանակահատուածի համար է պատասխանատու:

Պրն. Ռ. Կարապետեան- Ոչ, Թեմական Խորհուրդները հաշիւտու են միայն իրենց ժամանակաշրջանի համար: Հաշիւտութեան հարցն էլ տարբեր ծայքեր ունի, մենք անվերջ խօսում ենք հաշիւտութեան մասին, բայց երբ խօսում ենք Պ.Ժ.-ի մասին, պատգամաւորները ընտրում են ժողովրդի կողմից, ընտրուած մարմինը հաշիւտու պիտի լինի այն մարմնին, որի կողմից նշանակուել է: Իմ կարծիքով որեւէ խնդիր չունենք, որ հաշիւտու լինենք, բայց եթէ մեր ամեն ինչը մասնուրում մանրամասնութիւններով յայտարարենք, շատ ասելիք էլ չենք ունենայ: Դա կարող է մի քիչ անսովոր թուլ, պետութիւնները կամ մեծ ընկերութիւններն էլ գործի մանրամասնութիւնները չեն ներկայացնում: Թեմական Խորհուրդները ենթակայ են Պ.Ժ.ողովների, հետեւաբար հաշիւտու են Պ.Ժ.-ներին, այսինքն գերագոյն մարմիններին: Հարկ եղած պարագային իրենք՝ պատգամաւորները կը տեղեկացնեն ժողովրդին:

«**Լոյս**» երկշաբաթաթերթ- Ի՞նչ է Ձեր սպասելիքը հայ մասնուրում:

Պատասխան- Մեր ակնկալիքն այն է, որ ժողովուրդը մասնակից դառնայ իր ազգային կեանքին՝ մասնակցելով ընտրութիւններին, գործնական աշխատանքներին... Այդպիսով կը թեթեւացնի այն պարտականութիւնների ծանրութիւնը, որ մեր ուսերին է դրած: Դրա քարոզչութեան առաքելութիւնը մնում է մասնուրում: ■



Ճար. 2 եւ վերջ



Պարզապես՝ Միեր Մկրտչեան 70

Ա. Աղամեան

Այս էջն ամբողջական դարձնելու համար հնարատրին ու անհնարը պիտի անէի ու անպայման պիտի գտնէի Վարդան Աճեմեանին՝ իր խօսքն իմանայի, Գուրգէն Չանիրեկեանին՝ իր կարծիքը հարցնէի, Հենրիկ Մալեանին էի խնդրելու սրտի խօսք ասել, ուրիշներին... Անպայման ու անկասկած հէնց իրեն էի համոզելու ու հարցազրոյց էի կորզելու... Բայց գալիս է մի չապասաւած-չցանկացած դառը պահ, երբ հասկանում-զգում ես, որ քեզ հարազատ (զուցէ նոյնիսկ անծանօթ-հարազատ) մարդիկ ընդմիջտ հեռացել են: Եւ այդ «ընդմիջտը» գալիս-գամուտն է մտքիդ ու... ամէն ինչ թը-



տում է իզուր... Ու արդէն ամենից առաջ ինքը քեզ պիտի համոզես, որ արածդ իմաստ ունի, կարիք ու պահանջ, երբ գալիս է մահը, եւ բոլորն արդէն անգոր են:

70 տարի եւ 7 տարի: Ապրած 63 տարիներ, չապրած՝ աւելի երկար: Հէնց այդ 63 տարիներին՝ չապրած: Որովհետեւ կեանքը հնարատրութիւնների իրականացման, այնուամենայնիւ, մագաղաթն հնարատրութիւնն է տալիս: Անարդար է, որ մատն ցրան:

Միեր Մկրտչեանի մասին գրելը նոյնն է, թէ փորձես բանաձեւել առասպելը, փորձես ձեւ ու կերպարանք տալ հրաբուխին, չափագծես ծովը: Նոյնքան հնարատր է, նոյնքան անհնար է: Աշխարհը բացատրելու ու հասկանալու ամբողջ պայմանականութիւնն ընդունելով հանդերձ՝ դերասանի խաղը միշտ մնում է անբացատրելի: Խորքում՝ նոյնիսկ անկառավարելի: Որովհետեւ ինքն է, պահը, ու ամէն ինչ փոփոխական է՝ մարդիկ, օրը, տրամադրութիւնը, անգամ նոյն բառը, որ

ունի հազար հնչերանգ, նոյն շարժումը, որ ունի հազար նրբերանգ:

Միեր Մկրտչեանի դէպքում՝ հազար անգամ հազար, որովհետեւ նրա դերասանական հնարատրութիւնը երեւակա-յութիւնը սահման չունեցան ո՛չ թատրոնում, ո՛չ կինոյում: Աւելի յաճախ չունեցան մատն ժամանակ՝ չբեմադրուած ներկայացումների, չնկարահանուած ֆիլմերի, չխաղացած դերերի:



Միեր Մկրտչեանը եւ Մետաքսեա Սիմոնեանը

Ու մնաց տխուր-ուրախ մարդու նրա ամենայայտնի-ամենաչբացայայտուած կերպարը: Մարդու, որ այլեւս ապրում է ամէն հայի մէջ՝ իբրեւ իր ինքնութեան մաս: Մնաց անվերջ դերասանի նրա առասպելը, որ ամբողջ կեանքում եղաւ թատրոնում ու անվերջ բոլորի ու նոյնիսկ ինքն իր համար խաղաց՝ խաղաց ուրիշների եւ ինքն իր դերը: Աշխարհում ամենաշիտակացածը մնալով հէնց այդ վերջին դերում: Եւ մենք խելայեղ հրճանք ապրեցինք ու խելայեղ ծափերի հեղեղ տեղացինք, երբ նա կարիք ուներ լուրջեան եւ իր անպարագիծ մենակութեան մէջ իրեն մենակ չթողնելուն:

Աշխարհում շատ քիչ մարդիկ կան, որոնց անուց-ազգանունից յետոյ պէտք չէ ոչինչ աւելացնել, որոնց միայն անուն-ազգանունը պատմութիւն է եւ բացատրում է ոչ միայն իրենց անձնականը, այլեւ իրենց ապրած երկրի ու ժամանակի կեանքը: Եւ ուրեմն՝ Միեր Մկրտչեան ու վերջ: Մնացածը, թող իւրաքանչիւրը պեղի իր ներսում ու գտնի իր համար: Պարզապէս այսօր նա 70 տարեկան է, եւ ոչ ոք այլեւս նրան չի կարող շնորհատրել: ■

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
1	վ	ա	զ	գ	է	ն	ս	ա	ր	գ	ս	ե	ա	ն	■
2	ա	մ	ր	ա	պ	ի	ն	դ	■	է	ի	■	զ	ա	տ
3	ի	ա	կ	■	ի	զ	ա	մ	ո	լ	■	բ	ո	խ	ի
4	ա	ն	ա	ն	կ	■	փ	ի	ր	ու	զ	■	վ	ա	զ
5	գ	■	ն	ի	■	վ	ա	ր	ա	կ	ի	չ	■	տ	■
6	ն	ո	ք	ա	ր	■	ու	ա	կ	■	ջ	ա	խ	ե	լ
7	դ	ր	■	զ	ա	մ	■	լ	■	բ	ու	ր	ա	լ	ի
8	ա	ս	պ	ա	ր	ե	զ	■	■	ս	ա	մ	■	■	ձ
9	■	■	ա	ր	ա	տ	ա	բ	ա	ն	■	թ	ա	զ	■
10	թ	ի	ն	ա	■	ա	լ	ա	տ	ա	կ	ա	ն	■	վ
11	ե	ր	տ	■	ա	ղ	ա	ղ	ա	կ	■	ն	ա	ն	ի
12	ա	■	ո	ս	պ	■	կ	ե	ն	ա	ց	■	լ	ա	ր
13	ա	մ	ա	ր	դ	■	դ	ա	տ	■	չ	■	ն	ու	■
14	■	թ	ի	կ	ու	ն	ք	■	յ	ե	տ	ա	դ	ա	ս
15	մ	ո	մ	■	մ	■	ո	ձ	■	դ	ա	դ	ի	ր	■

Կրկնակի Լուսաբանութիւն

(Իրանահայ «որոշ» Գրողների միութիւնից Իրանահայ «անորոշ» Գրողների միութեան...)

«Լոյս» երկշաբաթաթերթի մայիսի 31-ի համարում կարդացինք Անդրանիկ Խեչումեան ստորագրութիւնը կրող «Իրանահայ որոշ գրողների միութիւն» գրութիւնը, որը գրած էր վերջերս Թեհրանում լոյս տեսած «Իրանահայ դարավերջի գրողներ» հատորի կապակցութեամբ:

Պիտի յիշատակել, որ որեւէ նոր լոյս տեսած հատորի մասին եղած արձագանքը,- թէ՛ դրական, եւ թէ՛ բացասական առումով,- համարում ենք ողջունելի, այդ իմաստով իսկ՝ զնահատելի ենք գտնում պրն. Ա. Խեչումեանի անդրադարձը:

Ինչպէս նշում է գրքի «Նախաբանի փոխարեւում»՝ «Բացարձակապէս յաւակնութիւնը չունենք սոյն գործը կատարելու եւ յատկապէս ամբողջական համարելու, քանի որ ելնելով հատորի համար *հնարատր ծաւալի* հրամայականից՝ բաւարարել ենք Իրանահայ գրողների միութեան *ներկայ շրջանակի*... մի քանի գրողների ստեղծագործութիւնների նմուշներ ներկայացնելով միայն»:

Կարծում ենք այս սեղմ տողերում ասած է ամէն բան, առաջինը այն որ՝ այս գիրքը,- ինչպէս նման ուրիշ գրքեր,- կատարելալ չէ ու չի էլ կարող ըստ էութեան լինել անթերի, քանի որ խիստ առածական է «իրանահայ» կամ ուրիշ առումով «պարսկահայ» հասկացութիւնը եւ յետոյ այն որ՝ շատ կուզեմայի՞նք հրատարակել առաւել սուար մի հատոր, ինչ որ չկարողացանք Ֆինանսական՝ նիւթական պատճառներով (եւ դա խիստ հասկանալի է այս օրերում), երրորդ՝ բաւարարել ենք միայն Ի. Գ. Մ.-ի *ներկայ շրջանակով* (այսինքն հարկադրած ենք եղել չներառել անցեալի՝ հանգուցեալ կամ Իրանը ընդմիջտ թողած գրողների), իսկ ինչ վերաբերում է Ի. Գ. Մ.-ից խիստ հեռու կանգնած մէկ-երկու անունի, ճիշտն ասած՝ շատ էլ չենք մտահոգւել նրանց պարագայով, քանի որ նրանք, անցեալ տասնամեակների ընթացքում, նոյն-իսկ մէկ անգամ, ներկայ չեն գտնուել մեր *ղոները միշտ քսց* յարկի ներքոյ ու նրանցից մէկ հատիկ իսկ մակագրած գիրք չկայ մեր «Մանուէլ Մարութեան գրադարանում»:

Գւրով Ա. Խեչումեանի յօդածին, մեր կարծիքով՝ նա մտահոգւած է ոչ թէ գրքի թերութիւններով ընդհանրապէս, այլ կոնկրետ՝ հանդուցեալ Գ. Խանենցի հարցով, ինչ որ թում է ոչ թէ արդարախոհութիւն, այլ... «ՔայՖայականութիւն»:

Այլապէս՝ սիրելի Խեչումեանը պիտի նկատած լինէր (գուցէ նկատել է...), որ գրքից բացակայում են Իրանահայ գրողների միութեան տարիների նախագահ բազմավաստակ ու շնորհալի գիտնական ու մրցանակակիր արձակագիր Սուրէն Ասատրեանը, Արմանուր

(Միացեալ Նահանգներ), հանգուցեալներ՝ Արշին, Ջօրայր Միրզայեանն ու Աշոտ Աւլանը, ուրիշներ...:

Ո՛չ, պրն. Անդրանիկ, սխալ վերագրումներ մի՛ կատարէք, մենք Խանենցին էլ գիտենք, միւսներին էլ, եւ դեռ շատ երկար կարելի է գրել եւ խօսել «անցեալների»՝ մասին, ինչ որ միշտ չէ, որ կը յանգեցնի «Քաղցր յիշողութիւնների»: Յետոյ, եթէ ճիշտ լինէին ձեր դիտողութիւնները՝ այս հատորում պիտի չլինէին նաեւ ուրիշ գրողներ, որոնք կա՛ն (հարկ կա՞յ անուններ յիշատակելու): Յետոյ մենք չհասկացանք ի՞նչ կապ կարող է գոյութիւն ունենալ տկն. Ա. Ալեքսանդրի սոյն հատորի խմբագրական կազմի անդամ լինելու եւ «Նոր-դար» ամսագրի Թեհրանի ներկայացուցչուհի լինելու միջեւ:

Վերջում մի փոքրիկ խորհուրդ եւս...

Քանի որ մենք, ձեր կարծիքով, «Իրանահայ որոշ գրողների միութիւն» ենք ու չենք ճանաչում «Ալիք»ի հետ չաշխատակցող որեւէ այլ գրողի՝ ձեզ առաջարկում ենք կազմել «իրանահայ *անորոշ* գրողների միութիւնը», քանի որ վերջին տասը տարիների քաղաքական-հասարակական հիմնական տակնուվրայութիւններից ու վերիվայրումներից յետոյ նրանցից շատերը մատնուել են լուրջ մոլորութիւնների, շփոթի ու «անորոշութեան»:

«ԻՐԱՆԱԿԱՅ ԴԱՐԱՎԵՐՋԻ ԳՐՈՂՆԵՐ» ԸՆՏՐՈՒ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ

«Լոյս» երկշաբաթաթերթի յարգելի խմբագրական կազմ:

30 յունիսի 2000 Թ. «Լոյսի» 7-րդ համարի 10 և 11 էջերի տպագրում հարցազրոյցում, ներքոյ ստորագրողիս հետ նկատուել են որոշ փոփոխութիւններ հետեւեալ կերպով.

ա- Հարցազրոյցի 7-րդ հարցի պատասխանը սա է եղել «Ինչու պետութիւնից չէք հարցնում», իսկ հարցի պատասխանը տպագրել էք «Մա արդէն մի այլ հարց է, որին կարելի է մի ուրիշ առիթով անդրադառնալ»:

բ- Հարցազրոյցի 8-րդ հարցի պատասխանի վերջին տողերը՝ «Ուրեմն մեր Թեմական Խորհուրդները հեռաւտես քաղաքականութիւն չեն վարել»:

Վերոյիշեալ տողերը հարց են արձածել Չեր կողմից, որը Չեր եզրակացութիւնն է եղել նախկին հարցի իմ պատասխանից ու ոչ թէ իմ տեսակետը:

Խմբագրութիւնից խնդրում են սոյն գրութիւնը տրպագրել յաջորդ համարում առ ի տեղկութիւն:

Ուժ և կորով Չեզ:

Յարգանքով՝
Էրաչ Խոսրովեան
8.7.2000



ԱՆՀՐԱԺԵՇՏ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ ՀԱՍՏ ԱՂԻՔԻ ՔԱՂՑԿԵՂԻ ՄԱՍԻՆ ԵՒ ԹԷ ԻՆՉՊԷՍ ԿԱՐԵԼԻ Է ԱՅՆ ԿԱՆԽԵԼ

**Գրեց՝ Զրիստին Գորման
Թարգմանեց՝
Լեոն Ահարոնեան
TIME Շաբաթաթերթից 20.03.00**



Եթե լրջօրէն մը-տածում էք ձեզ եւ ձեր բարեկամներին հաստ աղիքի քաղցկեղի դէմ պաշտպանել, հետեւեալ տեղեկութիւնները կարող են օգտակար հանդիսանալ:

Համարեա բոլոր հաստ աղիքի քաղցկեղները սկիզբ են առնում «պոլիպ»ներից, որոնք ողկուզանման մանր խուլեր են, որ աճում են մեծ աղիքի ներքին մակերեսի վրայ: Այս խուլերը, մեծ մասամբ բարորակ են, սակայն հազուադէպ դէպքերում բջիջների մի խումբ գեներտիկական ձախող պայմանների բերումով, սկսում են շարունակ մեծանալ մինչեւ որ վերածուծ են ուռուցքի (Tumour): Այս չարորակ ուռուցքների մօտաւորապէս 25 տոկոսը, գեներտիկական մի կանխահակումի հետեւանքով են գոյանում, որը առկայ էր ծնած օրւանից: Մնացեալ դէպքերում բնականոն գեները վնասւածք են ստանում տարիքի յառաջացման կամ էլ հաստ աղիքում կուտակւած կղանքի թունաւոր տարրերի բերումով:

Հետազօտողները յաջողել են յայտնաբերել ժառանգական հաստ աղիքի քաղցկեղի երկու գեն, որոնք ճանաչուծ են FAP եւ HNPCC անուններով: Մրանք ընթացք են տալիս 30-40 տարեկանների մօտ չարորակ ուռուցքների գոյացմանը: Բայց դժար է իմանալ թէ ովքեր ունեն այդ գեները, որովհետեւ դրանք յաճախ թաքնուած են լինում առողջ գեների մէջ:

Անցեալ ամիս, բժիշկ Բերտ Վոգելլստէյնը եւ «Բալտիմոր» քաղաքում «Ձան Հապկինգ բժշկական դպրոց»-ի իր գործակիցները Nature գիտական հանդէսում ներկայացրել են, թէ ինչպէս կարելի է դիմակազերծել եւ ճանաչել այդ պակասատր գեները: Միեւնոյն ժամանակ Մէյնարդ քաղաքի Էկզակտ տարրալուծարանում այլ հետազօտողներ կղանքի մի պարզ



քննութիւն են զարգացրել, որի միջոցով կարելի է գենական վտանգատր այլափոխութիւնները յայտնաբերել հաստ աղիքում: Քննութիւնը արժում է 250 դոլար, բայց հաւանաբար մինչեւ տարեկէտը, հանրամատչելի կը դառնայ ԱՄՆ-ում:

Հարց է առաջանում թէ առաջին հերթին ի՞նչ կարելի է անել պոլիպների գոյացումը կանխելու համար: Ամերիկայի Քաղցկեղի Հաստատութեան աշխատակից, համաճարակաբան Միշէլ Տոնը, 1991 թ. իր ուսումնասիրութիւնների ընթացքում նկատեց, որ այն մարդիկ, ովքեր կանոնաւոր կը խնայով ասպիրին են ընդունում ոչ կեանքակալի են ենթակայ լինում հաստ աղիքի ուղղակի քաղցկեղի: Այնույնտեւ պարզեց, որ ասպիրինը կասեցնում է COX-2 կոչւած անգիմի արտադրութիւնը, որն առկայ է բոլոր տեսակի ուռուցքների 90 տոկոսի եւ մեծ աղիքի պոլիպների 50 տոկոսի մէջ: Ըստ երեւոյթին մարմնի այս կարգի անբնականոն հիպէնները աճելու համար կարիք ունեն COX-2 -ի: Կասեցնելով վերջինի արտադրութիւնը, հաւանաբար, հնարաւոր կը լինի կանխել քաղցկեղի աճը կամ դրա գոյացումը:

Երուպայի Օնկոլոգիայի հաստատութեան Միլանի կենտրոնի պրոֆեսոր Պիտեր Բոյլի կարծիքով, COX-2-ն արգելակող դեղերը ամենից հզօր եւ թէժ միտերն են, բայց առայժմ պակասում են գիտական փաստերն այս մասին: Մարդիկ յոյս ունեն, որ դրանք կարող են զալիք տարիներում, քիմիականխարգելիչ զօրատր ազդակներ հանդիսանալ հաստ աղիքի քաղցկեղի դէմ:

COX-2-ն արտադրում է մաւե նորմալ բնականոն բջիջներում, ուստի եթէ դրա արտադրութիւնը լիովին

կասեցի, խնդիրներ կառաջացնի բրժիշկների համար: Միս կողմից, ասպիրինի կանոնաւոր եւ անընդհատ օգտագործումը կարող է առաջացնել այլ բարդութիւններ, ինչպէս օրինակ ներքին արիմահոսութիւն: Այդուհանդերձ, հետազօտողները բաւականից հրապարտած են COX-2-ի եւ քաղցկեղի հետ ունեցած կապակցութեամբ, փորձել տեսնելու թէ COX-2-ն արգելակող առտել ասպահով դեղերի մի նոր սերունդ արդե՞օք կը կարողանայ իջեցնել քաղցկեղի միջադէպերի թիւն այն ենթակաների պարագային, որոնք կրում են FAP եւ HNPCC գեներ: -Փորձառու ուսումնասիրական մի շատ գրաւիչ դաշտ է-, ասում է Տոնը,- Բայց դեռ շուտ է կլինիկական գործադրման համար:

Հաստ աղիքի բուժման մէջ, դեռեւս առաջատար տեղն է գրաւում վիրահատութիւնը, որը յատկապէս



արդիւնատէւ է արեւելի փոքր ուռուցքների դէպքում: Մոյն տեխնիկայի կատարելագործման հետեւանքով, այժմ հաստ աղիքի ուղղակի քաղցկեղով տառապողների 2 տոկոսից պակասն է, որ կարիք ունի ենթարկւելու

Կոլոստոմի-ի գործողութեան (հաստ աղիքի մասնահատում), որով մեծ աղիքին վերջընում են դէպի որովայնի պատին բացւած մի անցք, որտեղից հաստ աղիքի պարունակութիւնը պարպւում է մի տոպրակի մէջ: Մրանից երկու տասնամեակ առաջ վերը նշուած տոկոսը տաս անգամ արեւելին, այսինքն 20% էր կազմում:

Աւելի խշոր եւ տարածւած ուռուցքները քեմոտերապիայի կարիք ունեն: Մինչ կրծքի քաղցկեղը կարելի է ծունկի բերել 8-10 ուժեղ քիմիական դեղերով, հաստ աղիքի պարագային, մինչ այժմ, գոյութիւն ունի 1950 թ. կատարելագործւած միայն մէկ դեղ՝ 5FLUORO-URACIL-(5-FU): ■

Շար. 3 եւ վերջ

ՀԱՐՑԱԶՐՈՅՑ

ԴՈԿ. Գ. ՍԱՐՈՒԽԱՆՆԵԱՆԻ
ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ
ՇԵՏ

Բժիշկ, երեխաս ծանր հիւանդ է...
Բժիշկ, մեծապէս շնորհակալ եմ

Ծնողները հիւանդ երեխաներին գրկելով մռայլ, անհանգիստ եւ մտահոգ ներս էին մտնում բժշկի մօտ, ապա թեթեւացած ու փարատուած տուն էին վերադառնում:

Մարդկային ի՞նչ ծառայութիւն սրանից ակելի բարձր՝ ցաւազար մարմնին զոհունակութիւն պարգեւող:

Դալկահար դէմքին խինդ ու ժպիտ շնորհող:

Վշտահար սրտին ուրախութիւն բերող:

«Լոյս»-ի խմբագրութիւնը բարձր գնահատելով ակադեմիկոս բժիշկ Գարեգին Սարուխանեանի ողջ բժշկական կեանքը իր սեպուհ պարտականութիւնը սեպեց յիշելու եւ անդրադառնալու նրա անցած արդիւնաւէտ եւ յիշատակման արժանի ուղու մասին:

Հանգուցեալ բժշկի ցաւալի մահուան առաջին տարեկիցի հոգեհանգստեան արարողութեան Ս. Աստուածածին եկեղեցում, ուրբաթ յունիսի 30-ին հոծ բով սգակիրների շարքում նաեւ ներկայ էին...պրն. Լեւոն Ահարոնեանը, տիկ. Ռուբինա Փափազեանը եւ պրն. Ռուբէն Քէշիշեանը իրենց յարգանքի տուրքը մատուցելու, ցաւակցելու եւ մխիթարելու նրա ընտանիքի անդամներին իրենց ունեցած մեծ կորստի համար:

Հանգուցեալ բժշկի կեանքի մասին ընդհանրապէս (դոկտ. Ժիրայր Կարապետեանը մանրամասն կենսագրութիւնը պաշտպանօրէն ներկայացրել է «Ասպարեզ»-ի 14 օգոստոս 1999թ. համարում) առաւել տեղեկութիւններ քաղելու նպատակով «Լոյս»-ի թղթակիցը դիմել է նրա ընտանեկան կազմին՝ վարելով հարցազրույց, որը ներկայացոււմ է ստորեւ:

«Լոյս».- Մինչ անցնելը մեր հարցազրույցին, թերթի խմբագրական եւ խնամակալ մարմնի կողմից ցաւակցութիւն ենք յայտնում եւ մաղթում ձեզ՝ ապրողաց համբերութիւն եւ առողջութիւն: Վստահ ենք, որ ակադեմիկոս դոկտ. Գարեգին Սարուխանեանի յիշատակը կը պահել անմոռանալի եւ պայծառ աստղի պէս կը շողայ սիրեցեալ Իրանի երկնակամարի վրայ:

Հարց.- Կը խնդրեմ ներկայացնել ձեզ, ի՞նչ կապակցութիւն էք ունեցել հանգուցեալ բժշկի հետ:

Պատասխան.- Նրա կինն եմ, Թամարա, ամուսնացել եմ 1960 թւականին, բախտաւորել երկու աղջիկ զաւակներով:

- Ես Մարիան եմ, դոկտորի մեծ աղջիկը, համալ-սարանական ուսում եմ ստացել, լիսանսի արժանա-ցած, ամուսնացած եմ:

- Ես Սիւզին եմ, դոկտորի փոքր աղջիկը, գերլիսանսի վկայական ունեմ, ներկայումս աշխատում եմ:

Հ.- Նկատելով, որ արդէն իսկ մի տարի է անցել դոկտորի ցաւալի մահից, կորստից, իրօք նրա մահը մեծ կորուստ է մեր համայնքի համար, քանի որ իր հեղի-նակութեամբ եւ գիտութեամբ Իրանի բժիշկների փառան-գին պատկանող լատագոյններից մէկն էր, այս ուղղութեամբ ի՞նչ էք խորհում:

Պ.- Նա իր գիտութեան, բնաւորութեան, փորձառութեան եւ բերած մեծ ծառայութեան շնորհիւ ամէն տեղ սիրած եւ յարգւած էր:

Իրապէս նրա մահը մեծ կորուստ էր թէ՛ որպէս ամուսին եւ թէ՛ որպէս հայր: Նրա բացը խիստ զգալի է, մենք դարձանք որբ:

Այս մէկ տարին, որ անցել է, ամէն բոլոր իր հետ եմ եղել, իր յիշատակներով ապրել: Մեզ համար շատ կրկնելի է, բայց ինչ արած ամէնքիս համար կը գայ այդ օրը, ժամանակը իր դերը կը կատարի:

Գ-ննէ մխիթարում եմ այս տեսակետից, որ երեխաներիս յաջողեց արտասահմանից վերադառնալ եւ ներկայ գտնուել թաղմանը, տարեկիցի արարողութեանը



ու հրաժեշտ տալ իրենց պատուաւոր հօրը:

Հ.- Ինչպէս տեղեակ էք, հանգուցեալ բժիշկը արժանացել էր Իրանի բժշկական ակադեմիայի անդամակցութեան կոչմանը, հիմնադիրներից էր բժշկատառօջապա-հական կենտրոնի, պարգեւատրուել էր շքանշաններով եւ մրցանակներով:

Նա սիրւած ու փնտրւած բժիշկ էր եւ հասարակական գործիչ, եղել էր ազգային իշխանութեան Թեմականի եւ տարբեր ժողովների ու միութիւնների անդամ, նաեւ օրինակելի ամուսին եւ անգուզական հայր էր, արդե՞օք որեւէ լրացուցիչ կամ յանելալ բան յիշում էք, այս իր ունեցած պատասխանատուութիւնների վերաբերեալ, ինչպէ՞ս էր մտածում:

Պ.- Նա սիրում էր ծառայել, իր կարողութիւնները ի սպաս դնել, այնպէս որ տարբեր բնոյթի ծանր պատասխանատուութիւններ էր յանձն առնում: Նա ամէն ինչի նկատմամբ ուշադիր էր եւ քմախնդիր, ու միշտ ջանում էր լատագոյնը անել: Նրա համար հիւանդութիւնը իմաստ չուներ, աշխատանքի էր գնում, ժողովների էր մասնակցում եւ ամէն բոլոր հիւանդ էր ընդունում: Իր ուսանողների հետ շատ սիրալիք վերաբերմունք ունէր, հեզահամբոյր, համեստ եւ սրտցաւ էր:

Հարցազրույց

Հ.- Ինչպես գիտե՞ք դոկտորի կեանքը բեղմնավոր է եղել, հաւանաբար թողած կը լինի յուշագրութիւն, կարելի՞ է խնդրել դա յանձնել մեզ՝ թերթի էջերում յոյս ընծայելու նպատակով:

Պ.- Շատ լաւ, ինչ գրել է մամուլում իր մասին, կը յանձնեն ձեզ, պայմանով որ վերադարձնէք:

Հ.- Գոկտորը ապրեց եւ տեսաւ Հայաստանի անկախութիւնը, Արցախի ազատագրութիւնը, ի՞նչ էր իր մտորումների դաշտը այս ուղղութեամբ, արդե՞օք Հայաստան



այցելել էր եւ ինչպիսի՞ն էին նրա տպաւորութիւնները:

Պ.- Նախքան յեղափոխութիւնը, դոկտորը Իրանի կողմից բժշկական համագումարների է մասնակցել Թուրքիայում, ապա յարմար առիթ ստեղծուեց եւ գնաց իր ծնողների ծննդավայր՝ Վանը տեսնելու: Գտաւ պապենական յիշատակները, նկարեց, պալո պատրաստեց: Եւ դրանցով փառաւորեց հոգին: Հայաստան այցելեց նախքան անկախութիւնը, այնտեղ յիշատակելի օրեր ունեցաւ ազգակիցների հետ: Այլեւս չկարողացաւ ճամբորդել Հայաստան՝ վատառողջութեան պատճառով, ճամբորդելը թոյլատրելի չէր իրեն, բայց ապրում էր Հայաստանի անկախութեամբ եւ մեծ յոյսեր կապում հայ ժողովրդի արդար իրաւունքների վերականգնման հետ: Շատ ուրախ էր Արցախի ազատագրութեամբ, միշտ հետաքրքրուում էր կարողում էր թերթեր, Հայաստանի եւ Արցախի յաջողութիւններով ուրախանում, ի դէպ ճնշում էր անախորժ լուրեր լսելով:

Հայաստանի սուկալի երկրաշարժի պատճառով մի խումբ որբեր՝ երկրաշարժի աղէտեալներ, որ ժամանակաւոր Իրան էին բերել եւ պահում էին «Արարատ»-ում, նրանց ամէն տեսակ բժշկական խնամք էր մատուցում, հոգ տանում եւ ցաւում նրանց համար:

Հ.- Ի՞նչ էր մտածում դոկտորը մեր հայ ազգի մասին, ինչպիսի՞ն էր տեսնում Հայաստանի ապագան, ի՞նչ առաջարկներ ունէր դրա զարգացման եւ բարգաւաճման համար:

Պ.- Միշտ ասում էր, հայերը պիտի համերաշխ լինեն, միմեանց ոտքերի տակ չփորեն, եթէ միաբան լինեն, մի տեղ կը հասնեն: Յուզում եւ տխրում էր արտագաղթի համար: Ընդհանուր առմամբ արտագաղթողների նկատմամբ խիստ էր եւ որեւէ ձեռով չէր արդարացնում նրանց:

Յուսադրող կարծիք ունէր Հայաստանի ապագայի նկատմամբ: Համոզուած էր, որ գօրեղ, հայրենասէր եւ սրտցաւ պետութիւն պէտք է լինի՝ Հայաստան-Սփիւռք միասնական համագործակցութեամբ, Հայաստանը դէպի զարգացում եւ բարգաւաճում տանելու համար:

Հ.- Յարգելի տիկ. Թամարա, Գուրգու որպէս բժշկի կեանքի ընկեր-կողակիցը, ինչպէ՞ս էք բնորոշում, նկա-րագրում ձեր միասնական կեանքը, նա ի՞նչ գովասանքի արժանի յատկանիշներով էր օժտուած:

Պ.- Լաւ ամուսին էր, ամէն տեսակ հոգատար էր, ուշադիր էր երեխաներին եւ նրանց բարձրագոյն ուսում տալու համար շատ էր աշխատում:

Հ.- Միքելի Մարիա եւ սիրելի Միգի, Գուրգու որպէս նրա դստերը, ի՞նչ ասելիք ունէք Ձեր սիրասուն հօր մասին, խառնածքի եւ բնատրոսեան ո՞ր կողմերով ու կատարած ո՞ր գործերով էր դարձել Ձեր սիրելի հայրիկը:

Պ.- Շատ էր սիրում մեզ, շատ ազնիւ ու սրտամըղ-մուռ էր, բոլորը սիրում էին իրեն, մեր դասերի համար շատ էր ջանում: Նրա սրտի ցանկութիւնն էր, որ հայ երիտասարդը թէ՛ տղայ եւ թէ՛ աղջիկ պիտի ազգասէր եւ հայրենասէր լինի, բարձրագոյն ուսում ստանայ եւ ծառայի իր ժողովրդին ու հայրենիքին: Մենք երախտապարտ ենք մեր հօրը:

Հ.- Խորին շնորհակալութիւն ենք յայտնում Ձեզ, ընդառաջելու համար մեր հարցազրույցը: Վերջում եթէ



որեւէ յանդէպ ասելիք ունէք դոկտորի մասին, խնդրեն:

Պ.- Միշտ նրան ասում էինք, դու յոգնած ես, բաւա-կան է այոքան աշխատես, հանգստանալ է պէտք:

Նա չէր սիրում պարապ մնալ, աշխատանքը, սովորեցնելը, ծառայելը նրա կեանքն էր: Նա մինչեւ վերջին շունչը, մինչեւ այնտեղ, որ երակներում արիւնը հոսում էր աշխատեց ու չկտրեց հիւանդներից: Մահկանացուն կրնքեց աշխատանքի ժամանակ, երբ փոքրիկ երեխային քննում էր, ընկաւ եւ հոգին աւանդեց:

Իր մահը իր սրտով, իր ցանկութեամբ եղաւ: Բազմիցս պահանջեցինք, որ գնայ եւ բուժի, բայց նախընտրեց մնալ տանը եւ աշխատել: Այսպիսով ինձ մխիթարում եմ, որ իր մահը իր ուզածով եղաւ, բայց մի մեծ ցաւ ու վիշտ մնացել է մեր սրտում, այն է, որ իր աղջկայ ամուսնութիւնը չտեսաւ, յոյսով աղջիկները իրենց մտածելակերպով, վարքով ու արարքով՝ վառ աստղի պէս անմար, կը պահեն իրենց պաշտելի հօր յիշատակը: ■

ՖՈՒՏԲՈՒԼԻ ԸՆԴՈՒԳԻՏԱՐԱՆ

ԱՐԱՐԱՄԵՆԱՆ ԱՐԵՐՏ (1927-89) Դարպասապահ, մեկ խաղում՝ յարձակող: 1949-50թթ. Երևանի «Դինամոյի» կազմում հանդես է եկել ԽՍՀՄ առաջնության բարձրագույն խմբում: Անցկացրել է 5 խաղ, խփել 1 գոլ: Հայաստանի վաստակատու մարզիչ: Մարզել է «Շիրակ», ՖԻՄԱ (Հայաստանի կրկնակի չեմպիոն և կրկնակի գուարթակիր) քիմերը, աշխատել է նաև «Արարատում», այնուհետև գլխավորել է ԽՍՀՄ առաջնության երկրորդ խմբի մրցութիւնների մասնակից ՖԻՄԱ-ին:

ԱՐԱՐԱՄԵՆԱՆ ԱԼԵՕՅԱ (ծնւ. 1945 թ.) Դարպասապահ: Մայրոտի վարպետ: 1966-78թթ. Երևանի «Արարատի» կազմում հանդես է եկել ԽՍՀՄ առաջնության բարձրագույն խմբում: Անցկացրել է 276 խաղ: 1973թ. ԽՍՀՄ չեմպիոն, 1971 և 1976 (գարնանային) թթ. առաջնութիւնների արծաթ մեդալակիր, 1973 և 1975թթ. ԽՍՀՄ գուարթակիր: Մրցելոյքներն աւարտելով՝ անցել է մարզական աշխատանքի:



ԱՐԱՐԱՄԵՆԱՆ ՅՈՎԿԱՆՆԵՍ (ծնւ.1932թ.) Կիսապաշտպան, այնուհետև յարձակող: Մայրոտի վարպետ: Մրցակցի տուգանային հրապարակում խաբուսիկ հընարքներով աչքի ընկնող, դարպասին մշտապէս սպառնացող Ֆուտբոլիստ: 1961-62թթ. Երևանի «Մպարտակի» կազմում հանդես է եկել ԽՍՀՄ առաջնության բարձրագույն խմբում: Անցկացրել է 22 խաղ, խփել 3 գոլ: ԽՍՀՄ գուարթի 1954թ. խաղարկման եզրափակիչի մասնակից: Հայաստանի վաստակատու մարզիչ: 1973թ. խփել է ԽՍՀՄ չեմպիոն և գուարթակիր Երևանի «Արարատի» մարզական կազմում:

ԱՐԱՐԱՄԵՆԱՆ ՖՈՒՐՄԱՆ (1943-72) Պաշտպան: Մայրոտի վարպետ: Աչքի է ընկնում Ֆիզիքական լաւ պատրաստականութեամբ, մարտումակութեամբ: 1966-67թթ. Երևանի «Արարատի» կազմում հանդես է եկել ԽՍՀՄ առաջնության բարձրագույն խմբում: Մասնակցել է 184 խաղի, խփել 7 գոլ: ԽՍՀՄ առաջնության արծաթ մեդալակիր (1971):

ԱՂԱՏ ԸԱՐԿՍԵ Պատժամիջոց, որ կիրառում է Ֆուտբոլիստի վտանգատր խաղի, սխալ շրջափակման, անկարգապահ վարքի, մրցավարի հետ բանավիճելու և նման դէպքերում: Խաղի կանոններում սնցել է 1874թ.: Խախտում թոյլ տւած Ֆուտբոլիստները ազատ հարւած կատարելու ժամանակ պէտք է գտնեն գնդակից 9մ հեռաւորութեան վրայ և դրան չդիպչեն մինչև այն չնցելի խաղի մէջ: Ազատ հարւածը տուգանային հարւածից տարբերում է այն բանով, որ մրցակցի դարպասն անմիջականօրէն (եթէ գնդակը չի դիպել խաղացողներից

որեւ մէկին) խփած գոլը չի հաշւում: Մրցավարը ազատ հարւածի նշանակումն ազդարարում է սուլոցով և ձեռքը վեր բարձրացնելով:

ԱՄԵՐԻԿԱՆ ՖՈՒՏԲՈՒԼ Ռեզրիի և Ֆուտբոլի տարրերով խաղ, որը լայն տարածում ունի ԱՄՆ-ում: Ներմուծելով Անգլիայից՝ Ֆուտբոլը մի շարք փոփոխութիւնների է ենթարկել ու յարմարեցել տեղացիների ճաշակին: 1920թ. ստեղծել է արհեստավարժների լիգա:

108մ երկարութիւն և 48մ լայնութիւն: Դարպասների միջև հեռաւորութիւնը՝ 90մ: Դարպասների ետեւում ընկած 9-ական մետր տարածութիւնը համարում է հաշարկային դաշտ: Դարպասներն ունեն Ի տառի ձեւը: 6մ բարձրութեամբ ուղղահայեաց ձողերը գտնւում են միմեանցից 5.5մ հեռաւորութեան վրայ: Հորիզոնական ձողը գետնից բարձր է 3մ: Գնդակը ձւածն է: Մրցակից 2 քիմից խրաքանչիւրն ունի 11 խաղացող (7 յարձակող և 4 պաշտպան): Միաւորների հաշարկ է կատարում գոլ խփելիս (գնդակը պէտք է անցնի հորիզոնական ձողի վրայով, ուղղահայեաց ձողերի միջով), գնդակը դարպասից այն կողմ անցկացնելիս, դէպի մրցակցի դարպասը 10-ական մետր տեղաշարժելիս: Խաղը վարում են 6 մրցավար: Խաղակէտերը 4-ն են՝ 15-ական բոպէով: Բանում է բարձր արագութեամբ և ու-ժային կոշտ պայքարով, որի թելադրանքով Ֆուտբոլիստ-ները խաղում են յատուկ պաշտպանական հանդեր-ձանքով:



«ԱՆԱՔՍ» (Ամստերդամ) Ակումբը հիմնել է 1990թ.: Առաջինն է կիրառել համապարփակ Ֆուտբոլը: Մարգադաշտը «Մոդենվէզ» (27.000), միջազգային խաղերն անցկացնում է Անդստերդամի Օլիմպիական մարգադաշտում: Երոպայի չեմպիոնների (1971-31), գուարթակիրների (1987), ՌԻՖՖԱ-ի (1992), վերնագուարթի (1972-73) և միջմայրցամաքային (1972) գուարթակիր, Հոլանդիայի բազմակի չեմպիոն ու գուարթակիր: լաւագոյն խաղացողները՝ ՀրոյՖ, Նէսկենս, Կրոլ, Հասան, Ռէպ, Սուրբիեր, Շրիյերս, Բերգկամբ և ուրիշներ:



Ձար. 1

ԽԱՉԲԱՌ- ՀԱՄԱՐ 5

կազմեց՝
Կ. Տ. Յովհաննիսեանը

Շորիզոնական

- Հայ պետական մեծ գործիչ, որ վիթխարի ներդրում է ունեցել հայ ժողովրդի ժամանակակից քաղաքա-կան պատմության մեջ (1932-1999):
- Ժխտական ածանց- ուրախ լուր- պայթուցիկ գէնք:
- Նանե՝ արգելք- համեն է- հիանդա- նայ, թուլանալ:
- Գաղտնի որս անող- յունական մըր- ցասպարէզ:
- Անաւարտ ցաւ...- գործադրել- արեւե- լական տիւտրոս:
- Անձնական դերանուն- քանակ, ծա- ւալ- անպոչ պոչ...- խառնած տէր:
- Քանի որ- աջից՝ ստորոգեալ- աշնանային թթւահամ պտուղ:
- Իրանի հիւսիս արեւմտեան մահանգներից- ածական իր ցանկութեամբ վարող անձի համար- արեստի ճիւղերից:
- Նպատակադրում- հայկական գետ- ցուցական դերանուն:
- Անտառային հատապտուղ- անհեռանկար:
- Բռնիչ- էլեկտրական երկու բեւեռներից մէկը- երկնագոյն:
- Խմորեղենի բաղադրութիւններից- մարտդական օրգան- զինու բաժակ:
- Աջից առաջին մահապետը- թոյլ, մուգ նկուն- դասական երաժշտութեան կաղապարներից:
- Որտեղ- յարաբերական դերանուն- խատուտիկ- մի նիւթի մասին արտայայտել:
- Յնորամիտ, խելագար- պարզամիտ (օտար)- բացականչութիւն:

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
1															
2			■							■					■
3				■			■								
4								■	■						■
5			■									■			
6	■			■				■			■	■			■
7		■			■				■						
8					■							■			
9							■				■		■		
10		■						■							
11				■							■				
12					■					■				■	
13				■					■						■
14			■			■									
15							■							■	

ՈՒՂԱՆԱՅԵԱՑ

- Հակ- դիմադրել:
- Հայաստանի շրջաններից- յագեցած- բոլորակ ծիր, շրջան:
- Սնամէջ տաա...- ըստ Պ. Մեակի շատ է մնան աղի:
- Երկու ձայնաւոր- անիւ- հիւանդութեան դէմ դիմադրողական ունակութիւն- դեռ ոգի չի դարձել:
- Արեստագէտ երաժշտութեան մէջ- պարսկական առաջին կայսրութիւնը- ցածից՝ զիւղական աշխատավայր:
- Կենսական կարեւորութիւն ունեն բժշկութեան մէջ- գրքի մի մասը:
- Առաջ չէ- հայկական կերակրատեսակ (անաւարտ)- պաղատանք:
- Դատողութիւն, յիշողութիւն- ածական նագուկ մէջք ունեցող աղջկայ մասին:
- Վերջին տառի անկունով՝ բուն, ճշմարիտ- կատակ- ձայնանիշ է:
- Ղ. Աղայեանի մանկական հերոսներից:
- Յայտնաբերել- յաւելում- խոզի ձագ:
- Կանացի անուն- օժանդակ բայ- արագընթաց խոշոր ռազմանաւ:
- Խիստ պայծառ, պսպղուն- որեւէ երկրում՝ շրջան:
- Ածական արիւնալի դատողութեան համար- արկղ:
- Երկրաչափական մարմին- բարկացկոտ- կրկնութիւնը՝ թանկագին անուն:

ԼՈՒԾԵՔ
ԽԱՉԲԱՌ
ՍՏԱՅԵՔ
ՆԻԵՐ

Խաչբառ համար 4-ի լուծւած տարբերակը տե՛ս էջ 16-ում:



Յուլիս

Յեզար՝ կայսր են կոչել հռոմեական տիրակալները Օգոստոս-Օկտավիանոսից (մ.թ.ա. 63- մ.թ. 14, գահակալությունը՝ մ.թ.ա. 27- մ.թ. 14) մինչև Հանդրիեմոս (մ.թ. 76-138, գահակալությունը՝ 117-138): Աւանդաբար այդպէս են հորջորջել նաեւ Արեւմտեան ու Կենտրոնական Եւրոպայի տարածքում փուած այսպէս կոչուած Հռոմեական Սուրբ Կայսրութեան (800-1806) տիրակալները: Հին յոյները *կահասար* են ասել՝ նրա ազգանունն է, հայերը՝ *կայսր*, կրկին նրանը, գերմանացիները՝ Keiser :

Հայկական եօթերորդ ամիսը կոչուած էր *մեհեկան* եւ շարժական տոմարով հանրակրօնում էր ներկայիս փետրուարի 7-ից մարտի 5-ի շրջանին: Մեր նախնիներն այս անուան համար դարձեալ «ծեծել են» հին պարսիկների «գուռը», որոնց լեզուում *միհրական, միհր* ունեցել են նաեւ եօթերորդ ամսւայ իմաստը: Այս ամսանունը կապուած է պարսիկների *Միհր* (*Միթրա*- հայերէն *Միհր, Միտր*) կրակի աստծու անուան հետ, որին նրանք աշնան սեպտեմբեր ամսին մեծ տօնախմբութիւններ էին նւիրում:

Մի անգամ արդէն խօսք եղել է հայկական տոմարի շարժական բնոյթի եւ դրա հետ կապուած զանազան անհամապատասխանութիւնների ու ելեւէջների մասին: Այս ամսանունը նոյնպէս դրա ապացոյցն է. եօթերորդ ամիսը պարսիկների սեպտեմբերն է, հայերի՝ փետրուարը: Եւ հետաքրքրականն այն է նաեւ, որ պարսիկներն իրենց կրակի աստծուն սեպտեմբերին էին պաշտում, հեթանոս հայերը՝ փետրուարին, երբ 13-ին նշում էին Տեառնդառաջը, ժողովրդի լեզուով՝ Տորրնդէզը, խարոյկներ վառելու ու դրանց վրայով թռչելով (հեթանոսական սովորոյթը, չնչին փոփխութեամբ, հայերի մէջ պահպանուել է քրիստոնէութեան շրջանում, մինչև մեր օրերը):



Հումոր

⇒ Միայնակ ապրող մի հարուստ մարդ շատ էր վախենում մահից:

Համեցէք, ապրէք մեզ մօտ,- առաջարկում է նրա աղքատ հարևանը- դէռ մինչև հիմա մեր տանը ոչ մի հարուստ մարդ չի մահացել:

⇒ -Վիճակախաղի տոմս եմ գնել, -ամուսնուն է դիմում կինը,- հէնց որ շահեցի ինձ համար մի գեղեցիկ շքր-ջազգեստ եմ գնելու:

-Իսկ եթէ չշահեցի՞ր, -հարցնում է ամուսինը:
-Եթէ չշահեցի՞ դու ես գնալու:

- ⇒ Հոգեբուժի մօտ է գալիս մի հիւանդ և ասում.
- Փրկէք ինձ, բժիշկ:
- Ձեր ի՞նչն է ցաւում:
- Ոչ մի տեղս, պարզապէս ես վատ սովորութիւն ունեմ խօսելու ինքս ինձ հետ:
- Դա ամենևին էլ սարսափելի չէ:
- Բայց ես ահաւոր շատախօս եմ:

Ասացածքներ


Ջրադացից ես եմ գալիս, այրի մէջ դո՞ւ ես կորել:
- Եշմարիտ խօսքը յաճախ դեղի պէս դառն է, բայց բուժիչ է:

ԱՖորիզմ

Ծիծաղը արև է. նա մարդկային դէմքից հեռացնում է ձմեռը:

Վ. Հուզօ

Ամենամեծ ձմերուկը



Աշխարհի ամենամեծ ձմերուկը, որ մինչ այսօր աճեցուել է, մի մեծ մարդու չափ է եղել: Նրա քաշը 90 կգ. է եղել: Այդ ձմերուկը կարելի է բաժանել 400 հոգու միջև:

Քիթ

Աչքերը միմեանցից բաժանող կանոնաւոր կամ անկանոն ցցւացքը կոչուած է քիթ:Նայած իր ձևին ու ծաւալին, քիթը զարդարում կամ տգեղացնում է հարակից դէմքը, ուստի վճռական դեր է խաղում կեանքի ընկեր կամ ընկերուհի ընտրելիս:



Քիթ-կոկորդի մասնագէտները տարբերում են երկու հիմնական քթատեսակ. տեղական և ներմուծած:Միս բոլոր քթերն առաջացել են այդ երկուսի խաչաձեւումից:

Քիթի հիման վրայ ստեղծուել են զանազան դարձածքներ, օրինակ՝ «Ամբողջ օրը քիթ-քթի են տալիս», «Քիթը տնկել է», «Քիթ բորելու ժամանակ չունեն» :

Քիթն ունի նաև գործնական կիրառութիւն. այն կարելի է խոթել ամէն տեղ և բոլորին խառնել իրար:



« Արեւիկ, Արեւիկ... ես
Ծովագարդն եմ »

(Կես լուրջ կես կատակ
նեպոլտած
գիտարշաւարանից)



Պրոֆ. Ռ. Ա. Ղազարեան

«...Եթէ չլինէր մթնոլորտը, ապա երկրից ուղարկւած լազերային ճառագայթը լուսնի վրայ կը լուսաւորէր ընդամենը 200-300 մ տրամագծով մի շրջան...», այսինքն առաքման և ընդունման միջև այժմ անմատչելի ճշգրտութիւն կապահովէր: «...Եթէ չլինէր մթնոլորտը, ապա լազերային լուսնի մի փունջը կարող էր կրել երկրագնդի ողջ ինՖորմացիան...»: «Եթէ չլինէր մթնոլորտը, ապա հզօր ինՖրակարմիր լազերի փնջի մէջ հնարատր կը լինէր կենտրոնացել այնպիսի մի հզօրութիւն, որ...»:

Սակայն, փառք Աստուծոյ, մթնոլորտը կայ: Եւ նրա մէջ կան քամիներ ու ջերմաստիճանի պատահական տարբերութիւններ: Իսկ դրանք առաջացնում են օդի զանգւածների շարժում մրդկայնութիւն կամ, ինչպէս գիտնականներն են ասում՝ տուրբուլենտութիւններ կամ ցուցիչի չնչին տարբերութիւններ, որոնք սակայն բաւական են, որ «իրաշք-փունջը» բեկի, ճօճի, ճապաղի, ցրի, խամրի..., դեռ մառախուղը և տեղումնորը մի կողմ դրած: Այդքանից յետոյ արժէ՞ արդեօք զմայլել սպառնալի հզօրութիւններով և աննախընթաց ճշգրտութիւններով: Հարցերը շատ են... Ո՞ր դէպքում ճառագայթը ւսելի կը տուժի՞ ջրի՞, թէ ցամաքի վրայով տարածելիս, մակերեսին ընդհուպ մօտիկ, թէ՞ բարձրութեան վրայ, գիշերը՞, թէ՞, ցերեկը, արբանակից երկիր, թէ՞, հակառակը: Ո՞ր գոյնն է սակաւ խոցելի՞ կարմիրը, կանա՞չը, թէ ենթակարմիրը...: Հարցերը անհամար են, պատասխանները՝ քիչ: Տեսութիւնը ամենագօր չէ, պահանջում են չափումներ:

Ահա, այս կարգի հարցերի համատեղ ուսումնասիրման յետագայ հեռանկարն էր յուզում այն փոքր խորհրդակցութեան անդամներին, որոնք հաւաքուել էին 1973 թ. փետրարին Աշտարակում՝ Ֆիզիկական հետազօտութիւնների ինստիտուտի քրանտային էլեկտրոնային բաժնում: Ներկայ էին Մոսկվայի Մթնոլորտի Ֆիզիկայի ինստիտուտի, մեզ հետ տարիներ արդէն համագործակցող, յայտնի տեսաբան Տատարսկին և փորձարար Գուրիչը, ինչպէս նաև ծովագնացութեան և օդագնացութեան ինստիտուտների ներկայացուցիչներ: Ես շահագրգռած եմ մեր մի քանի երիտասարդ աշխատակիցներին կցել Կասպիականի ափին Գուրիչի կողմից կազմակերպուող ամառային գիտարշախին: Մենք շատ բան ունենք սովորելու այդ փորձառու կոլեկտիւից: Գուրիչը համաձայնում է, սակայն ինչ-որ դժկամութեամբ, քրթմնջում է այնտեղի

աշխատանքային անտանելի պայմանների և տեղական փորձառու մասնագետների բացակայութեան մասին: Ես չեմ հասկանում, թէ նա ինչու՞ է առարկում, և հաշի առնելով մեր հնգամեայ բարեկամութիւնը, պատրաստում եմ վիրատրելու, երբ յանկարծ, ճշմարտութիւնը շլացնում և խլացնում է մեզ Էլեայի մեղմիկ ձայնով՝ « Չեմ հասկանում ինչու՞ այդ նոյն գիտարշախը չի կազմակերպել Մեւանում»: Աստու՛ժ իմ, իհարկէ այո՛, բայց արդեօք կը համաձայնի Գուրիչը...: Հայաստանին սիրահար Գուրիչի համաձայնութիւնը կարողում եմ հաճոյքից շիկնած նրա դէմքին: Բացառած չէ, որ նա փայփայել է այդ նոյն միտքը:

Տենդագին բաշխում ենք պարտականութիւնները: Մենք պէտք է ապահովենք ենթակարմիր ճառագայթի յաղորդումը և ընդունումը, ռադիօհեռախօսակապը օդի միջև, վերջնակէտի ընտրութիւնը ու տոնակ-լարերատորիաների կառուցումը, մասնակիցների սնունդը և էլի 1000 ու մէկ մանրուք: Մկիզբը՝ յուլիսի 1-ին, աւարտը՝ օգոստոսի 15-ին: Գերպարտաճանաչ, գերազնի և գերզգոյշ Կարէնը թոշնում ու լցում է անհուն թախիծով՝

-Մեր բանը չէ, կը խայտառակւենք:

-Կէս տարի կայ, մի բան կանենք,- շեշտած լաւատեսութեամբ հանգստացնում եմ ես, աշխատելով քնեցնել ներքին տարակուսանքս:

-Չենք հասցնի,- տխուր համոզածութեամբ եզրափակում է Կարէնը:

Երեք ամիսը սլացաւ զայրացուցիչ արագութեամբ: Վրայ հասաւ յունիսի սկիզբը և... ենթակարմիր լազերի վերջին գործող խողովակի հոգեւարքը: Չորս Ֆոտոընդունիչներից հագիւ « շնչում է » միայն մէկը: Քանի որ յաղորդող և ընդունող կէտերի միջև 15 կմ հեռաւորութեան վրայ փունջը լայնանում է ընդամենը միջև կէս մետր, այսինքն մի երկու քայլ շեղելու դէպքում այլևս չի երևում, ապա այն ուղղորդելու համար յոյժ անհրաժեշտ է ռադիօկապ: Մի ամիս առաջ Մոսկւա ուղարկած խնդրագրի պատասխանը դեռ չկայ:

Սևանի քառակի շրջագնումը որոշակիութիւն չի մտցրել՝ վերջնակէտերը պէտք է բաւարարեն մի քանի պայմանի, նրանց թում էլեկտրացանցի, խմելու ջրի և սննդի որևէ օբյեկտի մօտիկութիւն:

-Մեր բանը չէր, քանի ուշ չէ՞ հրաժարուենք,- յիշեցնում է Կարէնը: Աս՛ դ, ուշ է, պէտք է փրկել վիճակը:

Յունիսի վերջին օրերից մէկը՝ նորից չափշփում ենք Սևանի հարաւ-արևմտեան ափը: Առջև տարիներ ի վեր ծանօթ, սակայն միշտ ճնշող տեսարանն է՝ ցամաքած Սևանի սպիտակաւուն ափերը, մահացու վիրատր բարեբարի «արմաքամող» բաց վերքերի «քար-ուկորները», վայ-էնտուզիաստների խոստացած արգասանդ հողերը: Ե՞րբ վերջապէս կը հասնի Արփա-Սևան «արհիւնաբեր» շտապ օգնութիւնը և վերջ կը դնի «ուկորների» յետագայ մերկացմանը: Հասկանում եմ Չարքեանի երբեմնի յամառութիւնը՝ ըստ երևոյթի նրա քունն էլ է խանգարել քամող Սևանի պատկերը: